Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17500/20

323.1(47.925)
O-90

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐԱՊԱՏԻՒ ՀՕՐՆ

ՄԱՂԱԳԻԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՕՐՄԱՆԵԱՆ

ՅԱՆՏՈՆԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԻ

ԱՐՏԱՍԱՆԵԱԼ Ի ԼՍԱԲԱՆԻ ԿՐԹԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՑԻՍԿԻՏԱՐ Ի 26 ՄԱՅԻՍԻ 1879

ԵՒ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ ՋԱՆԻՒՔ

ԿՐԹԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՊՕՂՈՍԻ ՓԻՐԻՇՃԵԱՆ
ԲԵՐԱ, ՇԻՇԼԻ ՀՈՒՅՍ ԹԻՒ 5

1879

523.1(=91.54)
П-6

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

323.1 (47.925)
Ս-90
26 SEP 2006
15 JAN 2010

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐԱՊԱՏԻՒ ՀՕՐՆ

Հ. ՄԱՂԱԿԻԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՕՐՄԱՆԵԱՆ

ՑԱՆՏՈՆԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ

ԱՐՏԱՍԱՆԵԱԼ Ի ԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՑԻՒՍԿԻԻՏԱՐ Ի 26 ՄԱՑԻՍԻ 1879

ԵՒ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ ՋԱՆԻՒՔ

ԿՐԹԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Պ. ՔԻՐԻՇՃԵԱՆ
ԲԵՐԱ, ՇԻՇԼԻ ՓՈՂՈՑ ԹԻՒ 5

1879

ՀՍՍՀ-ԿԳՊ
ՄԱՏԵՆԱՐԱՆ
1175

4 SEP 2013

17500/20

866
42.

ԱԶԳԱՑՆՈՑ ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆՆ

իւրեան նպատակ ունենալով, Կրթասիրաց Ընկերութիւնս սոյն առաջադրութեան հաւատարիմ արդիւնք մը կը համարի այսօր հրատարակութիւնն այս Բանախօսութեան, զոր արտասանած էր Դեր. Հ. Մաղաքիա Վ. Օրմանեան 'ի ներկայութեան բազմաթիւ ազգայնոց՝ Ընկերութեանս Սէլամբզի Լսարանին մէջ, եւ որոյ տպագրութիւնը թէ ներկայ ունկնդրաց եւ թէ բացակայ բանասիրաց կողմանէ ստէպ խնդրուած ըլլալով հայրենասիրաց այս իղձը լրացունել արժան դատեցաւ։

Ուստի քաղցր է մեզ յուսալ, որ մեր այս ձեռնարկն արժանաւորապէս պիտի վարձատրի բանասիրաց համայն եւ ազգասիրաց ընդունելութեամբը, զոր ստոյգ եմք գտանել այսպիսի ազգօգուտ եւ իմաստալից բանախօսութեան մը մասին։

Իւսկիւտար, Սէլամբզ.
'Ի 15 Յունիսի 1879

Ի դիմաց Դիւանի Ընդհ. Ժողովոյ
ԱՏԵՆԱՊԵՏ

Տեսքը և Տիրուհին·

Երբ կրթասիրաց Ընկերութեան Գործադիր Ժողովոյն հրաւէրը պատուեց զիս՝ այս երեկոյ բանախօսելու առաջարկութեամբ, ազատ թողուած էր բանախօսութեան նիւթը· այլ բնական հարկ մը կայր իմ վրաս, այն է ազգային նիւթոյ մը վրայ ճառել ազգասիրաց դումարման առջեւ։ Սակայն ընդարձակ է ազգային նիւթոյ ասպարէզը և հոն ամենայն ոք միշտ նորանոր կետեր կը գտնայ· այսչափ առեւնաբանք ազգային նիւթերու վրայ կը խօսին առանց իրարու զրուցածը կրկնելու։ Ձեր Ընկերութեան անունը, Տեսքը, որ այս գրական հանդիսից հաստատութեան և յառաջադիմութեան հետամուտ եղեւ և է, իմ մտացս դիմացս ելաւ· կրթասէր հրաւիրակքն, կրթասէր ընկերքն, կրթասէր ստուդիւ և ունկնդիրքս, մանաւանդ թէ ըսեմ բովանդակ իսկ բնակիչք Երրակի թաղից հնոյ Ոսկեքաղաքիս, ուր է Հայութեան կեդրոններէն մին, ոչ թէ թուովն միայն այլ և ըղձիւքն և ջանիւք։ Բայց ի՞նչ է ըղձ կրթել կը սիրէք կրթասերքդ, ոչ ապաքէն Հայն· վասն զի ազգային է հաստատութիւնդ և ազգային նպատակդ։

Այս նպատակին հետեւութիւնն է լաւ ճանչնալ առարկայն ըղձ կրթել կը սիրէք· իսկ առարկայն ըղձ պիտի կրթէք՝ մարմին մի է բարոյական, ազգ մը, որ իւր գոյութիւնը գիտէ արտաքին պարագայից յարաբերութեան մէջ· իսկ իւր էութիւնն հոգեկան յատկութեանց յարաբերութեանցը վրայ հաստատեալ է։ Դուք որ ձեր ազգը, Հայութիւնը, կրթել կը սիրէք, սոյն Հայութեան ինչ ըլլալը պէտք է որ լաւ գիտ-

նայք և խորունկ իմաստասիրէք, ուստի և ինչ ուրիշ նիւթ կրնայք ունենալ ձեր զննութեանց՝ եթէ ոչ Հայութեան Հոգին, որ է ամենայն Հայոց հոգեկան յարաբերութեանց բովանդակութիւնը։ Ա.հա, Ընկնդրիք իմ սիրելիք, ինչ մտածմունքով որոշեցի սոյն նիւթին վրայ ճառել այսօր, կարծելով այսու ոչ թէ իմ ներքին բաղձանաց յագուրդ միայն տալ, այլ և ճշդիւ այդ Լսարանիս հաստատութեան և նպատակին համապատասխանել, և անոր սահմաններուն մէջ մնալ։ Ա.յլ որովհետեւ Հայութեան հոգւոյն վրայ խօսելն՝ կը ներդրոց խորերը առաջնորդել՝ գործնական խնդիրները մոռցնելով, կ'ուզեմ այժմէն յայտնապէս զեկուցանել թէ տեսական խնդրոց ասպարէզը օտար է բոլորովին իմ նպատակէս, և պիտի աշխատիմ գործնական և գործադրական խնդրովք զբաղեցուցանել ձեր ունկնդրութիւնը։ Ա.նցաւ այն ժամանակը՝ երբ մեծ ինչ կը կարծուէր վերացեալ խնդրովք միտքերը յոգնեցնել և անիմանալի ճշմարտութեանց մեկնութեամբք ճոռոմաբանել. այսօր գործոյ ժամանակ է, և ատենաբանքս իսկ այդ հարկին պէտք է հպատակիմք։

Եթէ բարոյական մարմնոյ մը հոգին՝ իւր անհատից ընդհանուր եղած հոգեկան յատկութեանց և յարաբերութեանց բովանդակութիւնն է, ուրեմն Հայութեան ալ հոգին ամեն Հայ անհատի սեփհական հոգեկան յատկութեանց, և Հայ անհատներու իրարու հետ յարաբերութեանց բովանդակութիւնն է։ Թէպէտ և այդ յատկութիւնք և այդ յարաբերութիւնք մասնաւոր դէպքեր և մասնաւոր գործեր են, բայց անոնցմէ ընդհանուր բարոյական օրէնք մը յառաջ կուգայ, ինչպէս մասնաւոր բնական դէպքերէ և երեւոյթներէ՝ ընդհանուր բնական օրէնք մը կը հետեւցընեն բնագիտութեան իմաստունները։ Ա.յդ օրինաց հետեւելով բնագիտութեան նման բարոյագիտութիւն մը ի լոյս եկած է, և ինչպէս բնագիտութիւնը իւր օրէնքը և իւր իմաստասէրները ունի, սանկ ալ բարոյագիտութեան օրէնք և իմաստասէրք կան։ Բայց բարոյագիտութիւնը առհասարակ մարդկութեան վրայ

կը խօսի, շատ կ'ընդհանրացնէ իւր սկզբունքը՝ զննութիւնքը և օրէնքը, որպէս զի կարենայ ի մի միացնել և լծորդել ամեն մարդիկ, նախաջրհեղեղեանը և այժմեանը, հնաշխարհիկը և նորաշխարհիկը, զարդացեալը և կիսավայրենին, Հրէայն և Հելլէնը, Հայը և ոչ Հայը։ Մեք այդչափ ընդհանրութեան պէտք չունիմք. մարդկային սեռին այնչափ ցեղերէն մէկ հատը միայն առարկայ կ'ուզեմք ընել մեր զննութեանց, որ տեսակ մը ազգագիտութիւն կրնայ կազմել, կամ ճիշդ ևս հայագիտութիւն, եթէ գիտնականաց խիղճը կը ներէ այսպիսի զննութեանց դիտութեան անուն տալ։ Բայց ինչպէս չներէ, ցորչափ մեր այդ զննութիւնք ալ գործերու վրայ կը հիմնուին, սկզբունքներով կ'իմաստասիրուին և օրէնքներու հաստատութեան կ'առաջնորդեն։

Դէպքերը և գործերը, որք կարծես թէ մեր բարոյական և ազգային մասաւորական աշխարհին երեւոյթներն են, ես բոլորովին իսկ մէկ կողմ կը թողում. յայտնի կ'ենթադրեմ բոլոր իմ ունկնդրացս մեր ազգային պատմութեան յիշատակները, և մեր ներկայ ազգային դրից պարագայները։ Ասոնք են մեր դիտութեան հիմունքն։

Եւ որպէս զի ընդվայրապարծ չկարծուիմ՝ շուտով կ'ուզեմ յաւելուլ թէ ոչ այս տեղ և այսօր մեք առաջին անգամ այդ հիմանց վրայ հաստատեալ բարոյական իմաստասիրութիւնը պիտի կատարեմք. և ոչ թէ մեք անծանօթ դիտութեան մը անծանօթ օրէնքները գաղտնութեան խորերէն ի լոյս պիտի հանեմք. և ոչ իսկ ի լուր աշխարհի անլուր բաներ պիտի խօսիմք։ Ամեն Հայ անհատ, որ քիչ շատ իւր ազգին պատմութեան տեղեակ է, որ քիչ շատ իւր աչքին ներքեւ հանդիպած ազգային գործոց վրայ կը խորհրդածէ, մեկէն կ'սկսի անոնց յարաբերութենէն հետեւութիւն մը հանել, և իսկոյն իսկ վճռել թէ Հայն այսպէս կամ այնպէս է, և նոյն ժամուն բերման համեմատ՝ կամ երկնաչափ բարձրացընել զայն և կամ ինչուան անդնդոց խորերը իջեցնել։ Ա.յսպիսիներէն շատեր իրենց գաղափարը նաև գրով և հրատարակութեամբ ամենուն ծանօթացնելու աշխատած են։

Այս տեսակ խօսից և դրութեանց վրայ ընդհանուր ակնարկ մը նետելով կը տեսնամք, որ անոնք որ Հայը կը գովեն, աւելի բանաստեղծական արդեանց վրայ կը հիմնեն իրենց խօսքերը. և իրենց մտաց աշխոյժը շարժողը՝ աւելի եդեմական դրախտն է, Մասեաց սարը, Նոյեան աղաւնին, պայծառ երկինքն, դաշտաց բուրմունք, դիւցազնական վէպք, Գողթնեան պուէտք, Եփրատայ ափունք, Երասխայ յորձանք, և այլ սոյնպիսիք. քանթէ բուն բարոյական արդեանց պարծանք։ Մանաւանդ թէ նոքա որ այս վերջին դիտակէտին ներքեւ կը խօսին կամ կը գրեն, որչափ տարբեր ոճ կը գործածեն, որչափ վայեր կը կարդան, որչափ ողբեր. որչափ ստգտանք. որչափ ամբաստանութիւնք։ Նոր Խորենացիներ և Լաստիվերտցիներ, իրենց աղխողորմ հեկեկանօք ամենուն ականջը կը լեցնեն։

Զանազանութիւն մին ալ դիտած եմ, և կ'ուզեմ զայն ևս ձեզի հաղորդել։ Որք Հայուն վրայ կը խօսին, իրենք ալ Հայ ըլլալով, թէպէտ և Հայուն անձնական կարողութեանց և կատարելութեանց ալ պարտուպատշաճ գովեստը ընծայեն, թէպէտ և լիաբերան վկայեն իւր մտաց ընդարձակութիւնը, բնական աշխոյժը, գործունեայ բնաւորութիւնը, մարդասէր վարմունքը, և այլ աղէկ ձիրքերը, մէկէն կը յաւելուն թէ աւաղ որ մերազգիք չեն դիտեր այս գեղեցիկ յատկութիւններէն արժանաւոր արդիւնքն քաղել, և այդչափ երջանկութեան հասնելու կարողութիւն ունենալով հանդերձ՝ գըժբաղդ են իրենց իսկ յանցանքով, ոչ միութիւն ունին, ոչ չափաւորութիւն, ոչ արիութիւն, ոչ յարատեւութիւն։ Ի՞նչ բաղդեր, կ'ըսեն, չանցան մերայնոց ձեռքը. Ի՞նչ պայծառ ժամանակներ չունեցանք մեք պատմութեանց մէջ. այլ վայ մեզի որ մեք մեր ձեռօք զմեզ կործանեցինք. մատնիչներ մեր մէջէն իսկ ելան, անձնասէրք ազգը ընդոստեցին, և անմիաբանութիւնը իրեն ներքին դիժը փտեցուց։ Ասոնց համար Մեհրուժան Արծրունին, Վասակ Սիւնին, Վեստ Սարգիսն և նմանիք՝ Հայութեան հրէշներ չեն, վասն զի մատնութիւնը և անմիաբանութիւնը կարծես թէ Հայ հոգւոյն բնական կ'ը-

նեն։ Միթէ սովորական իսկ եղած չէ՞ մեր խօսից մէջ կրկնել թէ Հայ ըսել անմիաբան ըսել է. թէ Հայոց մէջ ամենայն ոք առաջին ըլլալ կ'ուզէ, իսկ երկրորդ և ոչ ոք. թէ Հայք ամեն դժուարութենէ կը վհատին. թէ Հայք սկսիլ գիտեն, բայց պահպանել և յառաջ տանիլ չեն գիտեր։

Եթէ այդ ամեն բացատրութիւնք ստոյգ էին, և եթէ իրականութիւնն ալ այդ էր, պէտք էր ուրեմն որ ցաւով սրտի և արտասուալից աչօք խոստովանէինք եթէ Հայութեան հոգին ընտիր բան մը չէ, և բնական ընթացիւք ալ այդ հոգիէն աղէկ բան մը սպասելու չեմք. և որովհետեւ այդ հոգին է որ մեզի պիտի առաջնորդէ, որով պիտի գործեմք, ուստի պիտի օգտիմք, չուզելով իսկ պէտք էր որ գլուխնիս ծռէինք այդ բարոյական հարկին ներքեւ, որ բնական հարկին պէս զօրաւոր է, և, բերանս իսկ առաջ չերթար ըսել, պէտք էր որ ընդունէինք թէ Հայքս աղէկ ապագայ մը չունիմք։

Ստոյգ եմ թէ ձեզմէ ոչ ոք իմ բերնէս այսպիսի խօսքեր լսել կ'սպասէ. և թէ այս վայրկենիս մէջ չփոթ դաղափարներ ձեր միտքն ալ դրաւած են։ Հետեւութիւնը ընդունիլ կը դժկամակիք, և յայտնապէս ըսեմ, թէ կը դժկամակիմ և ես. իսկ նախընթացները ժխտել չէք համարձակիր բոլորովին, վասն զի դուք ալ թերեւս ստէպ ստէպ կրկնած էք այն ստգտանքները, զորս մեծ ինչ ընել կարծելով կը յեղյեղեն շատեր։ Իսկ ես ճշդիւ այդ կետը պարզելու համար Հայութեան հոգւոյն վրայ ճառել որոշեցի ձեր առջեւ։ Հայութեան հոգւոյն մէկ մասը մեր իւրաքանչիւրին ներսն է, և մեզմէ շատերուն հոգին ինչ կերպ է, այն է Հայոց մեծամասնութեան հոգին, և Հայութեան հոգին ալ Հայոց մեծամասնութեան հոգին է։ Կ'զգայք դուք ձեր ներսը այնպիսի հոգի մը ուսկից բոլորովին մերժուած ըլլան միաբանութիւնը, չափաւորութիւնը, արիութիւնը և յարատեւութիւնը։ Ուրեմն եթէ դուք այսպիսի հոգի մը չէք զգար, և կարծեմ թէ այս կետիս մէջ ոչ ոք կ'երլայ իմ խօսքս ստել, ինչու՞ կը փութայք ձեր ազգայնոց ընդհանրութեան հոգին ամբաստանել։ Ինչու՞, Հայեր և Հայուհիներ, ինքզինքնիդ իբր բացառութիւն են-

թագրելով, յօժարակամ էք ընդհանրութիւնը մեղադրել։

Եթէ իմ կարծիքս կ'ուզէք լսել, ես պիտի պաշտպանեմ իմ ազգս. իմ կարծեացս համեմատ Հայութեան հոգին ա-նանկ անպիտան չէ ինչպէս ոմանք կը կարծեն. ես աւելի մեծ դաղափար մը ունիմ իմ ազգիս վրայ. և երջանիկ կը սեպէի ինքզինքս եթէ կարենայի իմ կարծիքս ընդհանրացը-նել, և անոնց որ աւելի խիստ են Հայութեան հոգին դատե-լուն մէջ՝ թէ ոչ համոզողութիւնը, գոնէ բարեմիտ ընդունե-լութիւնը շարժել։

Հոս ներուի ինձ քանի մը խօսքով զարտուղութիւն մը ընել, ի պատասխանի այն քննադատին որ զիս քիչ ազգասէր դը-տաւ երբ ուրիշ լսարանի մէջ խօսած ատենս Հայոյն ան-ցեալը համեստ գուներով նկարեցի։ Այն քննադատը, ո՞ոք և իցէ, օտարազգի հեղինակաց կարծիքներուն կրկնող մը և Հայոյն անցեալոյն վրայ հարեւանցի ակնարկ նետող մը դա-տեց զիս։ Ես լռեցի. վասն զի իմ բերանս չէր կրնար անձիս համար վկայել. սակայն աւելի մեծ պատճառ մըն ալ կայր իմ լռութեանս. ես եղելութեանց վրայ կը խօսէի, իմ քըն-նադատս կարելիութեամբ ինձ կը պատասխանէր. ես կ'ըսէի թէ չեղաւ, նա կը պատասխանէր թէ կրնար ըլլալ. և այսպէս ճշդիւ խօսելով, նա յաւէտ իմ խօսքս հաստատած կ'ըլլար ի մասին եղելութեան, քան թէ ժխտած։ Ապա թէ ոչ ուր կարողութեան և անհատական ձրից խնդիր ըլլայ, կարծեմ թէ պարտուպատշաճ մեծարանաց պարտքս վճարած եմ յիշեալ բանախօսութեանս մէջ, և այս ալ ներքին և խորին համոզմանս հետեւութիւնն է, ուստի վարեալ և որով վա-ւեալ այսօր ալ Հայութեան հոգւոյն վրայ խօսելով, կը համար-ձակիմ հաստատել թէ ի զուր կ'ամբաստանուի նա իբրեւ զուրկ ի միաբանութենէ, ի չափաւորութենէ, յարիութենէ և ի յարատեւութենէ։

Ի՞նչ ըսեմ ուրեմն գործոց և դիպաց դէմ. վասն զի ես ալ գիտեմ թէ իմ դիմացս պիտի դրուին շատ մը գործեր և և շատ մը դէպքեր, յորս անկեղծաբար խօսելով՝ Հայութիւնը իւր վրայ ոչ գովեստ կրնայ հրաւիրել և ոչ համակրութիւն.

մանաւանդ ըսեմ, առիթ ալ կուտայ որ իւր վրայ բարդուին այն տգեղ ամբաստանութիւնները զորս ի վեր անդր յիշա-տակեցի։ Գործերը և դէպքերը միշտ ծանօթ կ'ենթադրեմ իմ ունկնդրացս, որով աւելորդ կ'ըլլայ մանրամասնութիւն-ներ յառաջ բերել, որոնք սակաւաթիւ ալ չեն. մանաւանդ Արշակունեաց և Բագրատունեաց ժամանակ, և Պարսից և Հադարացւոց տիրապետութեան ներքեւ։ Ո՞վ չարտասուեր կարդալով որ Հայ ձեռքեր Հայոց թագը օտարին կը յանձ-նեն, և Հայ նախարարք Արտաշիր մը և Գագիկ մը արքունի դահէն իջեցնելով Պարսից և Ցունաց ձեռքը գերի կը մատ-նեն։ Ապաքէն եպերելի յանցանք և անարդութեան պատ-ճառք. որք և չեն դադրիր երբէք աղտ մը ընկալ այն ազ-գին և այն աշխարհին որուն մէջ այդպիսի աններելի ոճիրք գործուեցան։ Սակայն կը խնդրէի որ հոս կենար հետեւու-թիւնը, և ալ աւելի առջև չանցներ, և ոչ իսկ վատ մը ըլ-լար ըսելու. տեսէք Հայութեան հոգին. տեսէք Հայ հոգւոյն արդիւնքն. տեսէք թէ ինչ են Հայերն։ Այդ հետեւութիւնն կարի իսկ խիստ է, և գործ մը ինչչափ ալ ծանր ըլլայ չբա-ւէր ընդհանրութեան մը կերպը և հոգին կազմել։ Այս ըսե-լով կը հիմնեմ խօսքս ազգաց պատմութեան վրայ, և ի ներ-կայիս իսկ զանազան ազգաց և պետութեանց մէջ հանդի-պած դէպքերուն վրայ։

Դէջ և տգեղ գործեր մեր առջեւ կը դնէ Հայոց պատ-մութիւնը, անմիաբանութեան արդիւնք եղող կերպ կերպ արկածներ մեր հայրենեաց վրայ հասան, արդի ժամանակաց մէջ ալ կրնամք զանազան գործեր և պատահմունքներ առ-ջեւ բերել, որոց վրայ տխրելու և ամչնալու տեղի ունիմք։

Ի՞նչ ուրեմն. միթէ Հայոց պատմութիւնն է միայն որ այդ-պիսի թուխ կետեր կը պարունակէ. միթէ Հայերն են միայն որ այդպիսի յանցանաց պարտաւոր գտնուած են երկրիս վը-րայ. կամ թէ ներկայ ժամանակաց մէջ ալ Հայերէ զատ ուրիշ-ներ չկա՞ն որ հաւասարապէս նոյն տեսակ ամբաստանութեանց կրնան ենթարկուիլ։ Պատմութեանց փոքր ի շատէ տեղեակ լինելով, Եւրոպացի ազգաց մէջ փոքր ի շատէ բնակելով և ճա-

նապարհորդելով, և ժամանակակից դիպաց և տեղեկութեանց դբաղելով, կրնամ համարձակ խօսիլ և հաստատել թէ դրեթէ պատմութիւն չկայ որ իւր անուան անարդանք առթող դործեր չունենայ. պետութիւն չկայ որ ղղջալու առիթ ունդող պատահարներ չողբայ. և հիմակ ալ ամեն տեղ և ամեն կողմ հակառակութիւնք կը տիրեն և ընդդիմութիւնք կը թագաւորեն։ Ամենէն աւելի զօրաւոր և իմաստուն և խոհեմ կարծուած ազդաց մէջ այնպիսի բաժանմունք և հերձուածք կը տիրեն, որք ինչուան ազդին և պետութեան հիմանց հաստատութիւնը կը վտանդեն։ Աչուընիս դոց բռնելով՝ մնապարծ կրնամք ըլլալ, վասն զի մեր արդիւնք չափազանց աղէկ կ'երեւին մեզի. բայց նոյնպէս ալ աչուընիս դոցելով ի զուր ամբաստանող կ'ըլլամք, վասն զի թերութիւնք չափազանց մեծ կ'սկսին երեւիլ մեր աչքին։ Այդ կեսին վրայ երկար խօսելով բուն նպատակէս կը հեռանամ և երբ Հայութեան հոգին կ'ուզեմ խմացնել և ըստ կարի պաշտպանել, յանկարծ ինքզինքս ընդհանուր պատմութիւնը խմաստասիրելու վրայ կը դտնեմ։ Ինչ որ բաղդատութեան ոյժը ինձ կը թելադրէ, հասարակ պէտք է ըլլայ ևս ձեզ՝ որք զուրկ չէք պատմական և լրագրական ծանօթութիւններէ։ Որոց որ դայթակղելով կը նային մեր միջնադարեան ժամանակաց անտեղութեանց վրայ, յիշեցուցէք անդամ մը Եւրոպական Լատին և Գերմանացի ազդաց միջին դարերու պատմութիւնը. ի՞նչպէս օտարաց ձեռն տալով սեփական թագաւորութիւնին կը տապալէին. ի՞նչպէս տեսակ տեսակ բռնութեանց ջատագով կը կանդնէին. ի՞նչպէս ամեն ազդ ի ծուէնս պատառեալ հարիւրաւոր և հազարաւոր իշխանութեանց կը բաժնուէր. ի՞նչպէս համազդի և համարիւն եղբարք երերաց արեամբ սրսկեալ ի ինջոյս կը բազմէին. ի՞նչպէս ժողովուրդ բռնաւորաց հաճոյից խաղալիք էր և դերի. ի՞նչպէս ամենէն աղնիւ ղդացմունք տեղի կ'ուտային մղի և մղեռանդն կրից, և ամենէն անճոռնի և անպիտան դաղափարներ ուղղութիւն և արդարութիւն կը սեպուէին։

Սակայն ևս Հայութեան հոգւոյն ջատագովութեան համար, ունիմ ևս առաւել զօրաւոր փաստ մը, որուն վրայ կը հրաւիրեմ ամենէն աւելի անաչառ քննչաց նկատողութիւնը։ Ազդ մը որ կայ, և կայ ոչ իբր պատմական յիշատակ, այլ իբրեւ կենդանի և քաղաքական կենօք ճոխացեալ ազդ մը, իւր այդ կացութեան համար երկու պատճառաց միայն պարտաւոր կրնայ համարուիլ. կամ արտաքին յաջողութեանց կամ ներքին յատկութեանց։ Արտաքին յաջողութիւնք են իշխանութիւն, զօրութիւն, տէրութիւն, պաշտպանութիւն, հարստութիւն. իսկ ներքին յատկութիւնք են արիութիւն, յարատեւութիւն, չափաւորութիւն և միաբանութիւն։ Այս երկու ճանրէն ուրիշ միջոց մը դտնալ անհընար է. կամ դտնուածը այս երկուքին կը վերածուի, և կամ այս երկուքին ընկերակցութեամբ կը բաղկանայ։

Այսօր Հայը կայ, և քաղաքական ազդի մը սեփական կատարելութիւնները կը ցուցնէ։ Այս իրական բան մըն է և ստոյդ, ինչպէս ևս ստոյդ է որ արտաքին յաջողութեամբ չէ որ մեք կրցած եմք այդ դոյութիւնը պահպանել. որ ինչչափ ալ ստորին և դժուարին ըլլայ, տակաւին իւր մէջ բաւական բան մըն է, շատերուն նախանձելի և առ հասարակ ամենուն համար յուսացուցիչ։ Եթէ արտաքին յաջողութեամբ չէ, — վասն զի՞ւր են Հայոց տէրութիւնը, իշխանութիւնը, զօրութիւնը, պաշտպանութիւնը և հարստութիւնը. — հարկ անհրաժեշտ է խոստովանիլ թէ Հայոց ներքին արդիւնքն և արժանիքն են որ զինքը աղատեցին համայնաջինջ ձախորդութեանց ովկիանին ալիքներէն, և ամենածախ թշուառութեանց դաղանին ճանկերէն, և այդ ներքին արդիւնք ալ իւր հոգւոյն յատկութիւնք են. և ճշդիւ այն յատկութիւնք յորոց զմեզ զուրկ դատեցին և կը դատեն՝ որք դեպք և օրէնք իրարու կը խառնակեն, և մանաւոր դործերէ ընդհանուր հոգւոյն պատկեր մը կ'ուզեն ըստեղծել։ Ուրիշ առթի մէջ ալ Հայոյն անցեալը քննեցի, և իւր պատմութեան վրայ խմաստասիրելով հետեւցուցի եթէ անհատական կատարելութեանց նշանակ մի է Հայութեան ոյժմեան դիրքը. և եթէ եմք ինչ որ եմք միայն այդ պատ-

ճառին համար որ իւրաքանչիւր Հայ անհատ՝ լիովին ունե-
ցաւ այն խղճերը և զգացումները եւ ձիրքերը եւ կարողու-
թիւնները՝ որովք իւրաքանչիւր ազգի բնական կեանքը կ'ա-
պահովուի։ Ինչ որ այն առթին մէջ այսպիսի շրջաբանու-
թեամբ բացատրել պարտաւորեալէի, այսօր աւելի համառօ-
տութեամբ կ'անուանեմ զայն Հայութեան հոգին։

Բաւական գնոութեանց մէջ մնանք, որով և կրցանք քա-
նի մը նախադասութիւններ հաստատել Հայութեան հոգւոյն
կերպարանին և իւր գործոց և իւր արժանեաց վրայ. սա-
կայն դեռ մթին մնաց զանազան ծայրից իրարու համաձայ-
նութեան կերպը և մեկնութիւնը, որպէս զի բնաղնին հե-
տախոյզը գտնայ իւր մտաց յագուրդը, և անդստին յար-
մատի անդ ճանչնայ թէ բարի և թէ չար գործոց ծագումը,
կատարելութեանց սկզբնապատճառը և թերութեանց շար-
ժառիթը։

Մարդկային ընկերութիւնք առ հասարակ, որով ան-
ուամբ և կոչուին, ազգ կամ տէրութիւն կամ եկեղեցի կամ
աշխարհ, անհատից գումարումն են. և իւրաքանչիւր ընկե-
րութեան հոգին անհատից մեծամասնութեան հոգւոյն ար-
տադրեալն է։ Կան անհատք որք հասարակաբար առմամբ
անձնական յատկութիւններէ և կատարելութիւններէ զուրկ
են, կամ թէ կատարելութիւններէ զուրկ ալ չըլլալով այնպէս
աննշանակ բնաւորութեան տէր են, որ գրեթէ կ'ոչնչանան և
իբր թէ զգոն երբ անձնական դիրքերնին կամ իրաւունքնին
կամ արդիւնքնին ի լոյս հանելու առիթ մը մէջ տեղ կը դիր-
ուի։ Իսկ ընդհակառակն կան եւս ընկերութիւնք որոց ան-
հատք առանձնակի առեալք բաւական ձիրքեր և կատարե-
լութիւններ կը յայտնեն, որով իրենք իրենց կը բաւականա-
նան. և որովհետեւ նաեւ անհատաբար յարդ կամ արժէք
մը ունին, կը բաղձան, կը ձկտին և կը պահանջեն իսկ որ
ընդհանրութեան ընթացից և գործոց մէջ անհատից դիրք
մը որոշուի և անձնիւր գործունէութեան ասպարէզը չփակ-
ուի։ Մանաւանդ որ ընկերութիւնք կամ ընդհանրութիւնք
անմիջաբար անհատից միութենէ չեն կազմուիր, հապա մանր

և ստորակարգեալ ընկերութեանց միութիւն են, ինչպէս ազգ
մը որ ցեղերէ և քաղաքներէ կը բաղկանայ, պետութիւն մը՝
գաւառներէ և նահանգներէ, և եկեղեցին ալ՝ զանազան աս-
տիճանի վիճակներէ և թեմերէ։

Ընկերութեան ամբողջութիւնը սովորութիւն է շրջանակի
մը նմանցնել, որոյ կեդրոնն է այն բարձր իշխանութիւնը որ
ընկերութիւնը կը միացնէ. սակայն կեդրոնէն զատ ալ շա-
ռաւիղներ կան, և ասոնք ալ մասնաւոր և ստորակար-
գեալ ընկերական մարմնոց կամ մասանց օրինակներն են,
որք ի կեդրոն անդ միաւորեալք, սակայն առանձնական
դիրք և գործք և ասպարէզ ունենալէ չեն դադրիր։ Այդ
շրջանակի և կեդրոնի նմանութիւնը այնչափ սովորական ե-
ղած է ընկերութեան նկատմամբ, որ նոյն նմանութեան վրայ
հիմնելով անուն տրուած է երկու տեսակ վարչութեան կամ
մատակարարութեան՝ որովք ընկերութիւնք իւրաքանչիւր ի-
րենց ներքին ընթացից և յարաբերութեանց կանոնները կը
կարգադրեն։

Երբ կեդրոն կազմող բարձր իշխանութիւնը կը տարածէ
ամենուրեք իւր ազդեցութիւնը և գործունէութիւնը՝ առանց
թոյլ տալոյ մասանց և անհատից իրենց սեփհական կարողու-
թիւնը և ձիրքը գործածել, մասնաւոր գործունէութեանց
առջեւ խրամներ և պատնէշներ կ'ելլան, և ամենայն զօրու-
թիւն կաշկանդեալ կը մնայ, միայն կեդրոնականին թողլով
խորհել և գործել և փորձել, այդ վարչութեան ձեւը կեդ-
րոնական կամ կեդրոնացուցիչ կ'ըսուի։ Հակառակն է, այս-
ինքն արտակեդրոնական է, երբ թող կը տրուի որ նաեւ
մասնաւոր զօրութիւնք կարող ըլլան իրենց գործունէու-
թեան ասպարէզ մը ունենալ։ Հարկ չկայ իսկ յաւելուլ որ այդ
մասնաւորաց գործունէութիւնք չեն կրնար կեդրոնականին
հակառակ կամ ներհակ ըլլալ, առանց ընկերութեան ամ-
բողջութեան և միութեան վտանգ հասցնելու, և պէտք է
որ ամենն ալ կեդրոնին մէջ միանան։

Թէ այդ երկու տեսակ վարչութեանց որն արդեօք նա-
խադասելի է, երկար վէճերու նիւթ եղած է քաղաքագիտաց

համար. և հաւասարապէս ապացուցմամբ և հաւանականութեամբ երկու կողմերն ալ իրենց կարծիքը պաշտպանել կը կարծեն, և պատմական դէպքերն իրենց իրը փաստ առնելով՝ երկու կարծիքներն ալ անտեղութիւններ և օգուտներ յառաջ կը բերեն. և արդեամբ ալ պատմութիւնը երկու կարծիքներուն ալ թէ ի նպաստ և թէ հակառակ փաստեր կրնայ ընձեռել։ Ես կ'ըսեմ թէ բնական օրէնք է որ հաւասարաչափ մեծութեամբ մարմին մը աւելի տոկուն է երբ զանազան մասերէ ոլորած և բաղկացած է, քան թէ երբ միաձոյլ և միապաղաղ մարմին մը ըլլայ. այդպէս զանազան մասեր գաւազանաց խուրձ մը՝ միակտուր փայտի հետ բաղդատեալ, և զանազան երկաթ թելերէ պարան մը՝ միաձոյլ երկաթին հետ բաղդատեալ, տրամադիր հաւասարութիւնը ճիշդ պահելով։ Ինչ որ ալ ըլլայ այդ նմանութեան փաստը, որովք արտակեդրոնական ոճոյն պաշտպանք իրենց կարծիքը կը պնդեն, ես կարծեմ թէ բուն խնդիրը լուծելու հիմը յարաբերական է. այսինքն թէ պէտք է նայիլ ընկերութեան մը մասանց և անհատից կարողութեանց և ձրից և ղգացմանց, այսինքն է հոգւոյն։

Եթէ ունիս այնպիսի իմն ընկերութիւն՝ որոյ անհատք ոչ անհատական կատարելութեամբք հարուստ են, և ոչ անհատական իրաւանց խստիւ նախանձախնդիր, յարմարցուր անոնց կեդրոնացուցիչ վարչութիւն մը, ոչ միայն այն է անոնց յարմարը և օգտակարը, այլ կրնամ իսկ ըսել թէ այն իսկ է անոնց ուզածը։ Խստիւ կեդրոնականութիւնը այնպիսեաց զօրութիւնը կը կաղմէ, և ղերենք միաբանութեան մէջ պահելու կը ծառայէ. մինչ մասնական և անհատական դորձունէութիւն և իրաւունք՝ մասերը կը հեռացնեն, անտի անմիաբանութիւն, անտի լքումն, անտի իսկ ամենայն չարեաց և վնասուց աղբիւր։ Այլ երբ ընկերութիւն մը ընդունակ է արտակեդրոնական վարչութեան, և մասեր և անհատներ կարող են իրենք իրենց բաւականանալ ի դորձ և յարդիւնս, այս առթի մէջ՝ հակառակը վնասուց աղբիւր է. որովհետեւ մասնական ձիրք և կարողութիւնք երբ ինքզինքին

ճնշեալ և անդործ կը տեսնան, կ'սկսին կեդրոնական լուծին դէմ նշկահել բնական իմն բերմամբ, և կեդրոնին և մասանց հետ միաբանութիւնը կը պակսի. և երբ այս կը պակսի՝ զօրութիւն, արիութիւն և յարատեւութիւն միանգամայն կ'անհետանան։

Մեք շատ բարձրացուցինք Հայերուն անհատական կարողութեանց և յատկութեանց արդիւնքը. գոնէ այս է իմ ներքին համոզողութիւնս, այս է իմ մտացս դատաստանը, որով շատ դժուարին խնդրոց լուծումը կը գտնամ. և կը յաւելում իսկ թէ շատ մտացի ազգայինք քան զիս իմաստունք, այդ կարծեացս իրաւունք կու տան և զայն ընդունելի կը դատեն։ Քանի որ այս է իմ քննութեանցս հիմը, ներեցէք որ ձեր առջեւ առանց այլեւս շրջաբանութեանց մնալու շիտակէ շիտակ ըսեմ՝ թէ այն թերութիւնք զորս հին պատմութիւնք և ժամանակակից յիշատակք Հայութեան վրայ կը դնեն՝ իրենց արդարացուցումը կը գտնան վերը բացատրուած դրութեան մէջ. և Հայոց անմիաբանութիւնք առաւել այն առթիներու մէջ նշանաւոր եղան երբ Հայութեան հոգւոյն ներհակընդդէմ ոճ մը օտարաց դրդմամբ կամ զանազան պարագայից թելադրելովն, և կամ կեդրոնական իշխանութեան դլխոյն սխալանօք կամ կամակորութեամբ Հայաստանի մէջ հաստատելու փորձեր տեսնուեցան։ Արշակունի թագաւորաց վերջին ժամանակներուն մէջ, Մարզպաններուն և Ոստիկաններուն վարչութեան ներքեւ, և Բագրատունի թագաւորաց իշխանութեան առեն, այդպիսի փորձերու օրինակներ պակաս չեն։ Իրաւ որ ժամանակակից պատմիչք խորհրդածութեանց շատ հետամուտ չեն, մանաւանդ թէ իւրեանց դրութիւնք պակասաւոր են ի մասին այն պարագայից՝ որոց վրայ պատմութեան փիլիսոփայութիւնը կը հիմնուի. միայն մեզի արտաքին դէպքերը և դժբաղդութիւնները և ձախորդութիւնները կը պատմեն. իսկ իւրաքանչիւր անձին դաղտնի դիտմանց, սկզբանց, նպատակին, յատկութեանց և նմանօրինակ տեղեկութեանց բաւական մտադրութիւն չեն ըներ. որով և մեզ կարի դը-

ժուարին կ'ըլլայ ըստ արժանւոյն կշռադատել եղելութիւնքն. և երբ կ'ուզեմք դժպհի գործ մը քննադատել, չեմք կարող ճշդութեամբ դտնալ թէ ի՞նչ էր բուն պատճառը. ի՞նչ էր սկզբնական գործը. ի՞նչ էր իւրաքանչիւր անձին դիտումը, և թէ յանցաւորին քով գրգռող մը կայր, կամ թէ յանցաւորը ի՞նչ սխալ կարծեաց մէջ կը դտնուէր։ Քաւ յինէն չար գործ մը արդարացուցանել, կամ անմիաբանութեան չարութիւնը նուազեցնել, և կամ տգեղ յանցանք մը գեղեցեալ։ Բայց երբ կը տեսնամ թէ Հայոց և Հայաստանի թերութեանց պատճառը սխալ դրութիւն մի էր, ինչո՞ւ զայն յայտնապէս չզրուցեմ։

Հայրենասիրութիւնը կը՞ պարտաւորէ զմեզ ուղղակի թերութեանց ալ մանրազնին քննութիւնը ընել, որպէս զի երբ կը տեսնամք թէ անոնք հասարակ և գործողէն անկախ պատճառ մը ունին, նախ և առաջ սոյն պատճառը բառնամք. և թերութիւնք ալ միանգամայն վերցուին։

Ինչպէս կ'ըսէի, պատմագիրք մեզ բաւական ծանօթութիւններ չեն տար կատարեալ քննութիւն մը կատարելու, և տուածնին ալ շատ երկար ուսումնասիրելոյ պէտք ունին. այսու հանդերձ ով որ անկողմնակալ հոգւով և թափանցիկ աչօք կը կարդայ մեր ամենէն դժբաղդ դարուց պատմութիւնները, բնական իմն ազդեցութեամբ ալ կը նկատէ, թէ Հայաստան այն դարերուն մէջ ներհակընդդէմ վարչութեան ոճերու ալիքներու մէջ կը ծփար, հինը կ'աւրուէր և նոր մը չէր հաստատեր, Հայութեան հոգւոյն բերման և զդածմանց հակառակ գործեր կը կատարուէին, թագաւորք ազգային արժանապատուութեան մուտացողք՝ օտարաց պաշտպանութեան մէջ կը փնտռէին իրենց զօրութիւնը. և առանց ըստ կրցքան մերթ յարեւելս և մերթ յարեւմուտս, մերթ ի քրիստոնեայն և մերթ յոչ քրիստոնեայն կը դարձնէին իրենց ակընկալութիւնը. անոր համար ալ նախարարք միաբանութիւն պահելու անհնարութեան մէջ կը դտնուէին, ցորչափ և ոճն կեդրոնական իշխանութեան ինքն իրեն հետ միաբան չէր։ Նոյն պատմագրաց յառաջ բերած դէպքերուն մէջ

դժուար չէ տեսնալն թէ երբ կեդրոնական վարչութեան ոճն այս կամ այն կերպով Հայաստանի մէջ հաստատել կ'ուզուէր, այն ատեն աւելի կը զօրանային ներքին դժտութիւնք, վասն զի Հայութեան հոգին կ'ապստամբէր փորձոյ մը դէմ, զոր բոլորովին չեմ ուզեր դատապարտել, վասն զի կրնայ ըլլալ որ ժամանակին պարագայք թանձրացեալ և դործադրական առմամբ այնպիսի փորձ մը կարենան արդարացնել։ Սակայն չեմ կրնար ալ լռել թէ այն ոճը Հայութեան հոգւոյն յարմար չէր։ Այդ հոգին, որոյ այժմ ո՛չ դովեստը կ'ընեմ և ո՛չ դսրովը, այդ հոգին՝ որ Հայուն և Հայերուն և Հայութեան բնական է, ապստամբեցաւ նաեւ օդտակարութեան լուծէն։ Պակաս չեղան և չեն դէպքեր յորս կեդրոնական և կեդրոնացուցիչ հոգւոյ օդուտները ակներեւ էին և են, բայց Հայութիւնն նաեւ օդուտէն հրաժարեցաւ, և ի սմին կարծես թէ իւր հոգւոյն բնական դրդմանց հպատակեցաւ։ Կեդրոնական ոճոյն դործածութիւնը աւելի կարեւոր և աւելի օդտակար է դժուարին պարագայից մէջ և նեղութեանց ժամանակ, որպիսիք Հայոց և Հայաստանի վրայէն պակաս չեղեն. նա ինքն Հռոմ՝ հանրապետական կառավարութեան դադարումը կը վճռէր երբ հայրենիք ի վտանդի էին, և դիկտատորին անխոտոր և կեդրոնացուցիչ իշխանութեան ինքզինքը կ'ենթարկէր։ Այսպիսի պարագայից մէջ կը դտնուէր և Հայաստան. բայց Հայութիւնն դժբաղդագոյն ևս էր, վասն զի և ոչ իսկ իւր փրկութեան համար օրինաւորապէս խորհելու պատեհն ունէր։ Կրնամ ընդունիլ թէ որք Հայաստանի մէջ կեդրոնացուցիչ ոճոյ պաշտպան եղան, հայրենասէր նպատակ մը կրցան ունենալ. բայց կը խնդրեմ որ Հայոց և Հայութեան ամբաստանողներն ալ ընդունին թէ բնածին անմիաբանութեան հոգի մը չէր որ Հայը կը մղէր, հապա արտակեդրոնական դրութեան հակամիտութիւնը, և սոյն ոճոյն բնական յարումը, որ մինչեւ ցվերջին կետ՝ իւր հաստատութեան մէջ անվրդով մնալ կը նկրտէր։

Հինգ դարէ ի վեր Հայութիւնն զուրկ է քաղաքական դրութենէ, և խեղճ Հայն վարատական և ցրուեալ, հալա-

ծական և նեղեալ օտար երկնի տակ և օտար երկրի վրայ սկսած է վնտռել հանդստեան ճաշակը։ Բաղդը իրեն հետ ոխերիմ թշնամի՝ ունեցաւ տակաւին երբեմն երբեմն, աստ կամ անդ մարդասէր վայրկեաններ, և Հայաստանի սահմաններէն դուրս ալ Հայկայ որդիք ինքնօրէն և ինքնուրոյն վարչութեան հետքեր ունեցան. հոս ազատ քաղաք մը, հոն առանձնաշնորհեալ կեանք մը. հոս ցեղի մը ապահարկութիւնը, հոն գլխաւորի մը արիութիւնը. հոս պատրիարքական իշխանութիւնը. հոն կայսեր մը բարեսրտութիւնը, թէպէտ անկատար, թէպէտ անհաստատ, բայց միշտ տեսակ մը Հայ վարչութեան նշմարանք եղան։ Այսոնց ամենն ալ քննեցէք, և կը տեսնայք որ Հայն իւր հոգւոյն ազդեցութեամբ մղեալ, իրեն համար այնպիսի վարչական ձեւեր և մատակարարութեան ոճեր վնտռեց և պատրաստեց, որոց վրայ նաև ամենէն թեթեւ ակնարկ մը, անմիջապէս կը համոզէ թէ այն ժողովուրդը որ այդ ճանբաներով ապրեցաւ կամ կ'ապրի, չկրնար ընդունակ ըլլալ կեդրոնական ոճոյն։

Դաղտնիք մը յայտնած չեմ ըլլար, և ոչ ալ նոր ճշմարտութիւն մը խօսած, եթէ ըսեմ՝ թէ Օսմանեան հպատակ Հայոց ազգը կամ հասարակութիւնը, որուն Յաղթական Մեհէմմէտի կամքն՝ պատրիարքական անուան և արտօնութեանց ներքեւ՝ վարչական ձեւեր և իշխանութիւններ շնորհեց, տարօրինակ դիպաց և աղետալի դործոց պարտական և պատասխանատու դտնուած է անցեալ դարերու մէջ. բայց երբ. երբ խստապահանջ նոյնօրինակութեան, կեդրոնականութեան և մասնաւոր մարմնոց և անհատից անդործունէութեան փորձեր փորձուեցան։ Այս կերպ դէպքերուն՝ պատմութիւնը զանազան անուններ տուաւ, զանազան պատճառներ դտաւ, զանազան մեղադրանքներ հնարեց, զանազան յանցաւորներ ցուցուց, և աւելի ևս յառաջելով ոմանք բովանդակ իսկ Հայութիւնը իբր բարոյ խիք անբաւական և անյարմար դատապարտեցին։ Այլ եթէ այս ամեն մեկնութեանց տեղ Հայութեան հոգւոյն բնիկ յատկութիւնը դնէք, և անոր հակառակ եղած փորձերը և դործերը որոշէք, ա՛լ

պատմութիւնը ձեզի համար դժուարիմաց պիտի չըլլայ. և Հայութիւնն իւր թերութեամբ և իւր յանցանօք հանդերձ դովելի պիտի երեւնայ ամենուն. և որ իմ մտացս համեմատ առաւել նշանաւոր է և առաւել օգտակար, Հայութեան հոգին պիտի ցուցնէ իւր բարի յատկութիւնները, և անոնց որ Հայութեան բարոյն կ'աշխատին պիտի ցուցնէ՝ թէ որն է նպատակին հասնելու ապահով ճանբան։

Դարեր իրարու յաջորդեցին, այլ Հայութիւնն թաղեալ ի խորս ասիական աշխարհաց, ի մէջ նեղութեանց և տառապանաց, կ'առաջնորդուէր միայն իւր հոգւոյն բնական մղմամբ. և այն ժամանակներուն մէջ ալ դործով կը ցուցնէր ձեւ մը, որոյ անունը ապագայ ժամանակաց մէջ դրուեցաւ բարդաւաճեալն Եւրոպիոյ ճարտարահնար բառադիտութենէն։ Հայն ստացաւ յայնժամ տեսականապէս (ինչպէս տրամաբանք կը խօսին), ինչ որ արդէն ունէր իրականապէս. վասն զի ըստ իս 1860 տարւոյ "Ազգային Սահմանադրութիւնն Հայոց" ոչ թէ նորադիւտ ինչ է, կամ Հայ ժողովրդեան վարչական ձեւոյն մէջ հիմնական փոփոխութիւն մը, այլ մանաւանդ Հայութեան հոգւոյն պահանջը, որուն իւր ձգտմամբ և ըղձիւք կը դիմէր, ինչպէս նուրբ օդը կը ձգտի ի բարձր կամ ինչպէս ծանրը կը դիմէ ի ստոր. և այս այնու իսկ յայտնի է որ յօրէ անտի որ սահմանադրական ձեւը օրինաւորութիւն ստացաւ, և իւր առաջին ժամանակաց անփորձութեանը արդիւնք եղող դժուարութիւնք վերցուեցան, կարծես թէ Հայութեան հոգին իրեն աւելի յարմար կացութիւն մը դըտաւ, և իբր թէ ի բնէ անմիաբանութեան հակամէտն իւր բնածին մոլութիւնը մերկացաւ, և ինչուան դժուարին դործոց թեւակոխելու կարողութիւն ունեցաւ. և այնպիսի դործոց՝ յորս անմիաբանութիւնն եթէ մերժուի իսկ ինքնին կը սպրդի. և այս այնչափ նախանձելի միութեամբ և միաձայնութեամբ կատարուեցաւ, որ օտարք անդամ մեր վրայ սխրանալով կրցան Հայ ազդութեան վրայ ոչ միայն բարեյոյս լինել, այլ և վստահութեան հիմերը դտնել ի նմա։

Մեր այդպիսի հոգւոյն նպատակ է ևս այն, որ երբ կեդ-

866
42
ՀԱՅԿ-ՍՍՐ

ընական մեր իշխանութիւնը դրեթէ ոչինչ էր իւր հարկեցուցիչ միջոցաց անբաւականութեան համար, և նոյն իշխանութիւնն կեդրոնական՝ գործադրութեան միջոցներէ իսկ զրկուած էր, Հայութեան հոգին՝ որ մասնաւոր և անհատական կարողութեանց և գործունէութեանց լրումն է, գիտցաւ այնպիսի միջոցներ ստեղծել սոյն այս մասնաւոր և անհատական զօրութեանց ձեռօք, որ ազգս կրցաւ իսկ մրցիլ ի մասին յառաջադիմութեան այն ազգաց հետ՝ որք իրենց ձեռընտու ունեցան զօրաւոր իշխանութիւններ և բարձր հովանաւորութիւններ։ Միաբանութիւնք և ընկերութիւնք, գաւառք և թաղք, ինչ որ են, ինչ որ գործեցին, և ինչ որ կը գործեն, անստելի կերպով խօսքերս կը հաւաստեն։

Բանախօսի մը սահմանեալ ժամանակի միջոցը շատ ընդարձակ մեկնութեանց մտնալու չներեր, մանաւանդ երբ լայնածաւալ նիւթ մը բացատրելու պարտքը ստանձնած է. այս պատճառաւ ինչ որ ցարդ ակնարկեցի Հայութեան հոգւոյն գործոց և հակմանց, կատարելութեանց և թերութեանց վրայ, թող բաւական ըլլան մեզի, անոնցմէ ընդհանուր հետեւութիւն մը քաղելու և իբր ի հայելւոջ յայտնելու անոր կերպարանը և ըսելու թէ "Ահա Հայութեան հոգին"։ Ահա որովհետև այդ հոգին է որ ինքն պիտի կրթուի և Հայ ազգութիւնը պիտի կրթէ, պէտք է եւս որ այդ նպատակին հասնելու յարմար միջոցներ ցոյց տրուին, և Հայ սիրտերու մտոտի վախերը փարատելով, ամենուն սրտին մէջ քաջալերութիւն մը ազդուի՝ թէ Հայութեան հոգին ընտիր է. գոնէ այնչափ ընտիր, որ ամեն կերպ յառաջադիմութեանց և ամենեցուն ակնկալութեանց համապատասխանելու ընդունակութիւնը լիովին ունի։

Ահա մինչչեւ այդ բացատրութեանց սկսեալ, սակաւիկ մի խօսքս ընդհատելու համար ձեր բարեհաճութիւնը կը խնդրեմ։

Ազգի մը հոգին կատարեալ կերպով ներկայացնելու համար գիտեմ թէ չբաւեր ցուցնել թէ նա ի բնէ անմիաբանութեան հակամէտ չէ. կամ թէ բացատրել միայն թէ ինչ որ ոմանց համար անմիաբանութիւն կ'երեւայ, ճշդիւ և արդեամբ այս կամ այն զգացման արդիւնքն կամ մղութիւնն է։ Անոր համար ես ինքնին կը խոստովանիմ թէ Հայութեան հոգին ձեզի յայտնած և իմացուցած չեմ ըլլար բնախօսութեանս առաջին մասովը՝ ուր դրեթէ սոսկ յիշեալ կետին վրայ պնդեցի։ Սակայն կարծեմ թէ դուք ալ դիւրաւ իմացայք թէ իմ դիմացս դլխաւորաբար դրժուարութիւն մը կայր, և եթէ կանխաւ զայն լուծել չաշխատէի, կարծես թէ ամենուն սրտին մէջ դաղտնի խղճի խայթ մը թողուցած պիտի ըլլայի, և ամեն խօսքերս հարստահարիչ երկբայութեան առջեւ պիտի ցնդէին։ Ապա թէ ոչ շատ դիւրին գործ է Հայութեան հոգին բացատրել, մէջ տեղ դնելով այն դլխաւոր յատկութիւնները որք ընտիր հոգւոյ վիճակեալ ազգաց հասարակ են, և քանի մը համառօտ մեկնութեամբ հաստատել թէ ինչպէս այն ամեն յատկութիւնները՝ մեր ազգին մէջ ալ կը գտնուին, և Հայութեան հոգին կը զարդարեն։

Հայութեան հոգին ունի բնական արթնութիւն մը, աշխոյժ բնաւորութիւն, մտաց սրութիւն, որ և իցէ առթի մէջ ինքզինքը չկորանցնել, և ամենէն մեծ վտանգի մէջ կարող լինիլ պաղ արեամբ և լուրջ տեսութեամբ ելից դարմանը գտնալ և անոր գործադրութեան փութալ։

Հայութեան հոգին ունի սրտի արիութիւն՝ որով երբէք ինքզինքը ընկճեալ չկարծեր բաղդին բռնաւորութենէն և թշնամութենէն, և թէպէտև դժբաղդութիւնք երկնաչափ բարձրանան և ինքն անոնց ծանրութեան տակ հեծէ, սակայն այսու իսկ իր յոյսը և փոյթը չկորանցներ։

Հայութեան հոգին ունի անկուն յարատեւութիւն որով կը պահպանէ իւր ազգութիւնը և կրօնքը, լեզուն և սովորութիւնը, միայն իւր կամաց և մտաց անդրդուութեանը

վստահացեալ, երբ ամեն կողմէն չըսեմ յորդորեալ՝ այլ դոդ ստիպեալ իսկ է անոնցմէ բաժնուիլ։

Հայութեան հոգին ունի բարուց չափաւորութիւնը որով գիտէ առթից համեմատ վարուիլ, և իւր յաջողութեամբ չղեղծանիլ, ինքզինքը մոռնալով բերմանց և կրից դերի և խաղալիք չըլլալ. այլ ամեն պարագայից մէջ պահպանել իւր միակերպութիւնը, և արտաքին և բաղդի միջոցաց դործածութիւնն ալ կանոնաւորութեամբ մը կարդադրել։

Հայութեան հոգին ունի այն միաբանութիւնը որով աղգային անհատք իրարու միանալով կրնան ընդհանուր բարին և ընդհանրութեան աւանդ եղող բարիքը պահպանել, պաշտպանել, յառաջացնել և կատարելադործել։

Ահա ուրեմն Հայութեան հոգին. Հայութիւնն ունի ուրեմն ազգութեան հոգին, վասն զի ունի պահանջեալ պայմանները։ Մի ըսէք՝ թէ ինչ որ ես կը հաստատեմ թէ ունի, յաճախ փորձառութեամբ թերի կը դտնաք, և ստէպ իսկ այնչափ թերի որ աւելի բնական կ'երևի հետեւցնել թէ չունի։ Մի ըսէք, կ'աղաչեմ, վասն զի անիրաւած կ'ըլլաք դուք ձեր ազգին, և ձեր նախանձայուզութիւնը չարդարանար իրականութեան առջեւ։ Ազգութեան հոգին, ոչ միշտ առաքինութիւն է մարդուն համար, այլ ստէպ իսկ շահախնդրութիւն. դոնէ երկրայական է իմ մտացս դատաստանը երբ կը տեսնեմ՝ թէ ազգութեան հոգին համանիշ և համանուն կ'ըլլայ պաշտպանութեան և օգնութեան, փառաց և պարծանաց, շահու և անձնդիւրութեան։ Երբ ունի ոք ազգ մը զօրաւոր և փառաւոր, հարուստ և ազդու, ո՜հ, ի՞նչ դիւրին բան է այդ ազգութեան հոգին ունենալ. ինչպէս դիւրին է դոյն դումար մը նպաստից և ողորմութեանց նուիրել՝ երբ ոք բիւրաւոր ոսկիներու տէր ըլլայ։ Այլ ճշմարիտ ազգասիրութիւնը կամ ազգութեան հոգին, այն ատեն աւելի առաքինական է, չըսեմ թէ դիւցազնական իսկ, երբ ոք իւր ազգութենէն ոչ թէ պաշտպանութիւն՝ այլ հարստահարութիւն, ոչ թէ օգուտ՝ այլ վնաս, ոչ թէ դիւրութիւն՝ այլ վանդ, ոչ թէ փառք՝ այլ անարդանք յաւէտ իւր վերայ հրաւիրելու տեսակետի ներքեւ կը դործէ։ Հայքս, թող ամեն աշխարհ այս պարծանքը մեզի ներէ, Հայքս ազգերնիս սիրեցինք և կը սիրեմք, և կենդանի է Տէր, որ պիտի սիրեմք, թէպէտեւ այդ սէրը մեզի նեղութեանց դուռ մի ըլլայ և ոչ այլ ինչ։

Հայուն ազդասիրութիւնը յայտնուեցաւ միշտ անցեալ դարերու մէջ անդրդուելի հաւատարմութեամբ մը. թէպէտ բնական ընթացք իրաց այնպէս կը բերէին որ առանց այս ազդային հոգւոյն, այսօր Հայ մը իսկ մնացած ըլլալու չէր. և եթէ ոք մնացած ըլլար՝ Հայութեան անունն իսկ բերանը առնել պէտք էր որ չուզեր, առանց մէկ դերաստիճան առաքինութեան։ Որովհետեւ բնաւ շահու կամ դիւրութեան երեւոյթ մը չէր յորդորեր զինքը, — և եթէ կը ներուի ինձ այսպէս ինքզինքս բացատրել, — երբ ուրիշ շատ մը ազգաց ազդասիրութիւնը, ազդային երախտագիտութիւն կրնայ անուանիլ, Հայոց ազդասիրութիւնը պէտք է ազդային մարտիրոսութիւն անուանել։

Երբ այդ սկզբան վրայ հիմնեմք մեր դատաստանները, ո՜հ ինչչափ աւելի արդար և զինջ և բարեմիտ կը պարտաւորիմք ըլլալ մեր ազգին թերութեանց ի մասին ազդասիրութեան, որովհետեւ ըսել՝ թէ Հայերն ազդութեան հոգին կատարեալ ունին, չենթադրեր ամենևին որ ըսուի ևս թէ Հայերն ազդութեան հոգւոյն և ազդասիրութեան դործոց մէջ թերութիւն չունին։ Այո՛ ունին, և բաղձալի է որ այդ թերութիւնք ալ վերնան, որով մեր ապագայն աւելի յուսալից դիրք մը ստանայ. և բաց աստի՝ ա՛լ տեղի չտրուի այն չիմաստ որուն մէջ շատեր կ'ինան, և Հայուն սեփական թերութիւնները և Հայուն կամքէն անկախ չարութիւնները ի մի խառնելով, բոլոր իւր դժբաղդ դրից պատասխանատու՝ նոյն ինքն Հայը կ'ենթադրեն։

Ազդայնոց և Ազդասիրաց առջեւ կը խօսիմ, կը համարձակիմ ևս ասել թէ առաջի ազդագիտաց, որոց համար դաղտնիք չեն Հայոց և Հայաստանի դէպքերը և անոնց շարայարութիւնը։ Քանի՞ դար է որ ձախորդութիւնը կը հալա-

ծէ Հայկայ որդիքը։ Ես կարծեմ թէ ճշմարտախօս ըլլալ ուզելով՝ պէտք է ելլամք այն ժամանակները երբ կրակապաշտութիւնը քրիստոնէութեան, Սասանեանը Արշակունոյն, և Պարսիկը ոչ Պարսկին դէմ անողոքելի հակառակութիւն մը ղդայ, և այս երկու կողմանց մէջ անհաշտ պատերազմներ դրդռուեցան։ Հայաստան հազիւ թէ ամենամեծ վոխոխութեան մը ենթարկուած՝ յեղափոխութեանց կից եղող սըկարութիւնը կը կրէր. զօրաւոր դրացիք այդ երկրին տէրութեան համար կը կռուէին. և միտքեր ալ յուզման մէջ մնացած՝ տեսակ տեսակ խնդիրներէ և շահերէ՝ իբր թէ ամենի ալիքներէ կը կոծուէին։ Ան օրէն ի վեր կրնամ ըսել թէ Հայաստան աղէկ օր մը չտեսաւ, և հոգի առնլոյ կամ կաղդուրելոյ վայրկեան մը չունեցաւ։ Արեւելքէն Պարսիկք, արեւմուտքէն Յոյնք, Հադարացիք հարաւէն և Սկիւթացիք հիւսիսէն, տասնըչորս դարէ ի վեր շարունակ կը հարուածեն այդ տարաբաղդ աղգը և դժբաղդ երկիրը, որ հզօրաց մէջ տեղը մնացած և անոնց կրից թատրոն ըլլալու դժպհի բաղդն ունեցաւ։ Հայն այդ կռիւներուն մէջ ոչ միշտ ուղղակի հարուածոց նպատակն էր, թէև անոնց հպատակ. հզօրք իրերաց ձեռքէն կ'ուզէին զայն թափել. և իբր երկրորդական ինչ՝ զօրաւոր դրացւոց բաղդին կապուած էր Հայաստանի բաղդն ալ։ Այդ ծովացեալ դժբաղդութեանց ովկիանին մէջ, աստ և անդ սեպացեալ ժայռեր փրփրադէզ ալեաց դէմ մաքառելով Հայութեան դրօշը կրեցին իրենց վրայ, և փառօք կրեցին։ Մամիկոնեանք, Բագրատունիք, Արծրունիք, Ռուբինեանք, Ուրբելեանք, Դաւիթ և Մխիթար Սիւնիք, և մինչև ցվերջին ժամանակս քաջարի զաւակքն Ուլնիոյ, կրցան սպարապետութիւններ, իշխանութիւններ, թագաւորութիւններ, և ինքնօրէնութիւններ հաստատել և պաշտպանել մասնաւոր դաւառաց մէջ կամ ապահով լերանց վրայ։ Ասոնք թէպէտև Հայութեան բաղդն հիմնապէս չկրցան բարւոքել, սակայն մեծ արդասիք ունեցան անոր գոյութեան և պահպանութեան օգնելով, և այնպէս որ անոնցմէ իւրաքանչիւրն՝ թէպէտև իբր ամենայն Հա-

յոց իշխանութիւն և աղատութիւն չկարենայ յառաջ բերուիլ, բայց և առանձնակի առեալ իբր կանոնաւոր՝ բարեկարգ՝ աշխարհաշէն և զօրաւոր իշխանութիւն մը կրնան յիշատակուիլ, գոնէ գլխաւորները։ Իսկ ես ուրիշ նպատակ մը ունիմ այս յիշատակները յառաջ բերելուս մէջ. կ'ուզեմ հետեւցնել, որ եթէ Հայերը այնչափ թշուառութեանց և դժուարութեանց մէջ այդպիսի գործեր կատարելու և այդպիսի արդիւնքներ յերեւան հանելու կարող եղեն, ուրեմն կատարեալ աղգային հոգի, ճշմարիտ աղգասիրութիւն, և իրական միաբանասիրութիւն ունեցան. որովք միայն այդ գործերն կը կատարուին։ Ի զուր է պնդել թէ աւելին կրնային ընել եթէ ուզած ըլլային. կամ ինչպէս շատերը կ'ըսեն, եթէ միաբանութիւն ունենային։ Վասն զի որոնք որ այդ աստիճան հաստատութիւն և յաջողութիւն ցուցուցին, նոքին աւելի լաւ դատաւոր են՝ քան թէ այժմեան քննիչները. և եթէ կրնային՝ ոչ ապաքէն ըրած ալ կ'ըլլային։ Միւս կողմէն մի՛ մոռնայք Հայաստանի վիճակը այն դարերուն մէջ, երբ յիշեալ մասնական Հայ իշխանութիւնք հիմնեցան Մեծ և փոքր Հայոց, և նաև անոնցմէ դուրս եղող երկիրներուն զանազան կողմերը։ Աչուընդնուդ առջեւը ըլլայ սեպացեալ ժայռին օրինակը որ համատարած ովկիանին ալիքներէն կը ծեծուի, կը դիմանայ, և չխորտակիր. միթէ՞ օրէն է ըսել՝ թէ ինչո՞ւ դեղեցկատեսիլ ծաղիկներով զարդարուած չէ. կամ թէ անոր վրայ մանր ծառեր, կանանչ թուփեր, փոքրիկ արօտներ միայն տեսնալով, կրնա՞ ըսել՝ թէ ինչո՞ւ բարձրաղէզ ծառեր, դեղասաղարթ անտառներ և ընդարձակ մարգագետիններ չպարունակեր։ Միթէ՞ զարմանալու չեմք անոր հաստատութեան և մասանց իրարու հետ ամրապինդ միութեան վրայ, որով միայն անկործան մնացած է և կը մնայ։

Ուստի արդարադատ քննիչը պիտի զատէ այն՝ որ Հայութեան հոգւոյն պատասխանատուութենէ անկախ թերութիւն է, ինչպէս որ ես ալ կ'ուզեմ ընել. և ցուցնելէն ետքը՝ թէ ինչպէս Հայութեան հոգին ընդհանրապէս առեալ

այնչափ ընտիր յատկութեամբք զարդարեալ է և այնչափ գո-
վելի է որչափ և ուրիշ ազգաց հոգիք, և բացատրելէն ետ-
քը՝ թէ շատ մը թերութիւնք որք Հայ ազգութեան վրայ կը
դրուին, իրեն պատասխանատուութեան ներքև չեն իյնար,
պէտք է որ աւելի առաջ անցնիմ, և ինչ որ մեր թերու-
թիւններ են անոնք ալ մէջ տեղ դնեմ։ Թերութիւն կ'ըսեմ
ոչ թէ բարոյական իմաստով միայն՝ որ է յանցանք, այլ
նաև բնական իմաստով՝ որ է պակասութիւն։

Դժուարին գործ ապաքէն, դալև ի հրապարակի քարոզել
թէ Հայութեան հոգին կամ Հայ ազգութիւնը այս կամ այն
պակասութիւնները ունի։ Ոչ թէ միայն եղբայրսիրութիւնն
է ըսկ՝ որ թերութիւնները ծածկել և քօղարկել կը յորդորէ,
այլ նաև անձնասիրութիւնը, վասն զի որով որ ընդհանրու-
թեան մեղադրանք պիտի խօսիմ, նովին և զանձն իմ և զիմ-
սէն պիտի դատապարտեմ։ Իրաւ է որ երբեմն այսպիսի կը-
ծու պաշտօններ ալ յանձն պիտի առնուն անոնք որ ուսու-
ցանելու և վարդապետելու և ատենաբանելու պաշտօնը վը-
րանին կ'առնուն, և ես իսկ խուսափել չեմ ուզեր այդ դա-
ռը և զկծեցուցիչ պարտքէն. այլ միայն կերպարանը փո-
փոխելով, փոխանակ դատախազի և ամբաստանի ձև առնլու,
կ'ուզէի որ բարեկամի եղանակաւ քննեմք թէ ինչ ընել հարկ
է մեզ ներկայ պարագայից մէջ, որ Հայութեան հոգին իւր
բարձր սկզբան և աւելի բարձր նպատակին համեմատ գործե-
լով՝ մսիթարական և օգտակար արդիւնքներ յառաջ բերէ։

Սերման և բողբոջի և մշակութեան և պտղաբերութեան
օրինակը ինչչափ ալ շատ սովորական եղած ըլլայ, նորէն
կրկնելը միշտ աւելորդ չէ։ Աղէկ պտուղ ընդունելու համար
աղէկ սերմ ունենալ բաւական չէ, աղէկ ալ մշակելու և
խնամելու է, ապա թէ ոչ նաև ամենէն ընտիր հունտը վը-
տիտ և տկար, որդնոտ և փտած պտուղներ կուտայ՝ եթէ
կարեւոր խնամք եղած չէ։ Հայութեան հոգւոյն ալ երբեմն
երբեմն ընտիր պտուղներ չտալուն ասկէց զատ պատճառ
փնտռելու հարկ չունիմք։ Ինչչափ պատմութիւնը կրկտեմք
ոչ թէ մերինը միայն, հապա ընդհանրապէս ամեն ազգաց

պատմութիւնները, նոյնչափ կը համոզուիմք եթէ ան-
կերթ ժամանակներու մէջ աւելի վնասակար գործեր կա-
տարուեցան, և մի և նոյն ազգութիւնն և հոգին զանազան
դարուց մէջ ստացած կրթութեան համեմատ զանազան գոր-
ծեր ալ ցուցուց, երբեմն բարի և երբեմն չար, երբեմն գո-
վելի և երբեմն դատելի։ Աւելի զգալի եղաւ այդ կեսը
մեր ազգին մէջ, որ՝ ոչ թէ միայն առաւել կամ նը-
ւազ կրթութեան ատեններ ունեցաւ, հապա և կերպ կերպ
կրթութեանց ազդեցութիւնն ալ զգաց՝ Հայաստանի
տեարց կրթութեան աստիճանին և անոնց ընկերական հոգ-
ւոյն կերպին համեմատ։ Ընդհանրին այն ժամանակէն որ մեր
պատմութիւնը ճշմարտութեան վրայ հիմնեալ կը ներ-
կայանայ մեզ, Հայաստանի տիրապետողաց փոփոխութիւնը՝
զգալի կ'ըլլայ նոյն իսկ Հայ ազգութեան հոգիէն, և պատ-
մութեան քննադատ իմաստասէրները կարծես թէ շօշափե-
լով կ'զգան Պարթեւական և Պարսկական, Յունական և Ա-
րաբական, Քրիստոնէական և Մահմէտական իշխանութեանց
իրարու յաջորդելը։ Հայը չկրցաւ չզգալ իւր տիրապետաց
հոգին. վասն զի երբ ասոնք քիչ մը հինցան՝ սկսան նաեւ
լուծին հետ հոգին ընտելացնել իրենց հպատակներուն, և
Հայութեան հոգւոյն վրայ իրենց սեփական թերութեանց
զգածմունքները պատուաստել։ Բնական էր որ այդպիսի պատ-
ուաստք և նորութիւնք հաւասարապէս ամեն անհատից վը-
րայ չներգործեն, և անկէց հակառակութիւնք ալ ծնանին.
բայց աւելի չարն այն էր որ Հայաստան իւր բաղդին տարօ-
րինակ և կոյր հարուածներուն՝ և ոչ իսկ կատարեալ միոյ
միայնոյ տիրոջ ձեռք ինկաւ, այլ ներհակընդդէմ զօրու-
թեանց մէջ տարուբերելով՝ մէկ կէսը այս՝ և միւս կէսը այն
տէրութեան կամ ազգի ծառայութեան ներքեւ ինկաւ, և
անոր ազդեցութեանց ենթարկուեցաւ։ Այսպէս կը տեսնամք
թէ դարու մը մէջ Պարսիկք և Հոռոմք, միւս դարուն մէջ
Հագարացիք և Բիւզանդացիք, ուրիշ դարու մը մէջ ալ
Թաթարք և Ֆրանկք, և յաջորդ դարերու մէջ եւս ուրիշ
ազգեր, բաժնեցին և անջատեցին՝ ոչ միայն Հայոց երկիրը այլ

և Հայոց հոգին, և տարբեր շահերու նկատողութեամբ տարբեր կարծիքներ յարուցին մեր մէջ։ Ի՞նչ զարմանք ուրեմն եթէ և ազգային միաբանութիւնն միանգամայն բաժնուեցաւ, երբ զանազան տէրութիւններէ և զանազան ազդեցութիւններէ զանազան կրթութիւններ սկսանք ստանալ։

Այսօր Հայութեան հոգին բարգաւաճելու առաջին միջոցն՝ զայն հաւասարապէս կրթելն է, հաւասարապէս կ'ըսեմ՝ թէ չափուն և թէ կերպին նկատմամբ։ Իսկ հոգին կը կրթեմք նախ մանկական հասակին մէջ, երբ դեռափթիթ է և ամեն կերպ ազդեցութեանց ընդունակ. բայց կը կրթեմք նաեւ ապագայ տարիներուն մէջ, երբ Հայն յարբունս հասեալ է. և այն ատեն կը գործածեմք լուսաբանութեանց, հրատարակութեանց, քարոզութեանց, ժողովոց, ընկերութեանց, գործառնութեանց, և այլ նմանօրինակ միջոցներ. և ինչչափ ասոնք տարածուին՝ այնչափ աւելի կրթութիւնն իւր ազդեցութիւնը կը տարածէ և Հայութեան հոգին ալ ոյժ և համարձակութիւն կ'ստանայ։ Իսկ մանկական հասակին կրթութեան, այսինքն է դաստիարակութեան վրայ գալով, այս նիւթը հոս չեմ ուզեր երկարել, ոչ թէ նուազ կարեւորութեանը համար, հապա գլխաւորաբար նիւթոյն ընդարձակութեան համար՝ որ ինքնիրեն բանախօսութեան մը կամ թէ բազում բանախօսութեանց ալ նիւթ կրնայ ընծայել, և հոս հարեւանցի խօսիլն՝ յարգը նուազել է և ոչ թէ առաւելուլ։ Միւս կողմէն ալ ազգն արդէն այդ կետին նըկատմամբ բաւական արթնցաւ, և թէ իշխանութիւնք և թէ ընկերութիւնք այդ նպատակին միայն իրենց փոյթը դարձուցած կը խօսին և կը գրեն, կ'աշխատին և կը հաւաքեն, կը ծախեն և կու տան որպէս զի դաստիարակութիւնը բարգաւաճի։

Իմ խօսիցս նպատակին մէջ մնալով այս միայն յիշատակեմ թէ մեր տալու դաստիարակութիւնն բոլորովին ազգային պիտի ըլլայ, ազգային ըստ լեզուին, ազգային ըստ նիւթոյն, ազգային ուսմունքն և ազգային ուսուցիչքն ալ։ Որոնք որ ունկնդրացս մէջէն դաստիարակութեան աղնիւ

գբաղման կապեալ են, կամ թէ իրենց ընտանեաց և պաշտամանց առթիւ դաստիարակութեան խնդրոյն վրայ միտք յոգնեցուցած, այնպիսիք պիտի գիտնան ինծի պէս, թէ ինչպէս կը բաբախեն մանկական՝ պատանեական և երիտասարդական սիրտեր, երբ ուսուցիչն բացատրէ իրենց՝ Հայազգի դիւցազին մը քաջութիւնը և փառքը, կամ վատաբաղդ մեր հայրենեաց թշուառ խեղճութիւնները։ Անկեղծաբար խօսելով, իմ սիրտս անպատմելի մխիթարութիւն մը կ'զգայ, երբ մատաղերամ մանկուց հայրենական պատմութեան ուրախալից կամ տրտմալից դէպքերը աւանդած ատեն կը տեսնամ թէ խնդութիւնը և տխրութիւնը, աշխոյժը և թախիծը հետզհետէ անոնց կայտառ երեսաց վրայ կը գծագրուին։ Հաւատացէք ինձ, ունկնդիրք իմ, թէ այն բնական և բնածին զգածումը մեծ յոյս կուտայ ինձ ապագային վրայ, գըբաւական է ինձ այն թէ բազմադարեան պանդուխտքս իսկ, որք հայրենի յիշատակները երկար ժամանակ մոռացութեան մէջ թողուցինք, և լեզունիս իսկ կորսնցնելու վտանգի մէջ ինկանք, հոգին չեմք կորսնցուցած։ Հայութեան հոգին զօրաւոր հոգի է, սակաւ իսկ կրթութեամբ մեծամեծ արդիւնքներ կարող է արտադրել։ Հայեր և Հայուհիներ, ծընողք և դաստիարակք, եթէ յուսացուցիչ է ձեր դիտակետն, ուրեմն աններելի էք եթէ Հայութեան հոգւոյն համեմատ չէք գործեր Հայ մանկութեան նկատմամբ։

Այսու հանդերձ պէտք է եւս խոստովանիլ, թէ արդի Հայութեան հոգւոյն մէջ մանրաղնին խուզողութիւններ ընելով դժուար չէ տեսնալ վհատութեան երակներ՝ որ կամաց կամաց սպրդած են մեր ազգին մէջ. և շատեր ա՛լ աւելի առջեւ երթալով կատարելապէս կը յուսահատին և Հայութեան հոգւոյն վրայ տխուր տապանագիր մը ալ կը դնեն. Ա՛լ այդ ազգէն յոյս չկայ։ Հայութեան հոգւոյն տկարութեան նշան մի է՞ արդեօք այդ վհատութեան խօսքը. ոչ երբէք, սիրելիք իմ, մանաւանդ թէ անոր զօրութեան նշան մի է. վասն զի նա որ այսպէս կը խօսի տխրութիւն մի կ'զգայ իր սրտին մէջ. և գոգ բռնադատեալ կ'արտասանէ այն ահագին

խօսքերը, ինչպէս զաւակ մը իւր սիրեցեալ մօրը մահուան անկողնոյն քով, անոր վրայ հոգեվարքի նշանները տեսնալով, երեսը կը դարձնէ և մօտ կեցողին արտասուալից աչք և սրտառուչ հեկեկանօք կ'ըսէ. Ա՛լ իւր կենաց յոյս չկայ։ Արդեօք այդ զաւակը նուազ սէր ունի՞ իւր մօրը վրայ։

Ի՞նչ ըսեմք ուրեմն այդ վհատութեան նշաններուն և կիսահաղագ բացատրութիւններուն վրայ. իրաւ է՞ արդեօք որ Հայութեան հոգւոյն վրայ յոյս մը դնելու չէ։ Օ՜ն անդր, քա՛ւ լիցի։ Որ այսպէսն կը խօսին կրկին ծանրութեան տակ ճնշեալ կ'զգան իրենց դաղափարները. մէկ կողմէն մեր հէք հայրենեաց սրտակոտոր վիճակը, ուր ամենայն ինչ թշուառութիւն կը շնչէ և յողբս կը շարժէ. միւս կողմէն յառաջացեալ կամ յառաջադիմութեան ձեռք զարկած ազգերուն օրինակները, որոնք եթէ յաջողութեան կը հասնին՝ այնչափ և այնպիսի դիւրութեամբք և նպաստիւք զօրացեալ են, որ Հայ ազգութեան ոչ թէ ի մօտոյ ունենալն այլ և ի հեռուստ ակնկալելն իսկ անհաւանական կը դատուի։ Ինչչափ որ ես ալ այդ տեսութեանց ծանրութիւնը զգամ, —և եթէ անկեղծ խոստովանութիւն մըն ալ կ'ուզէք, ինչչափ որ ես ալ պահ մը այդ վհատեցուցիչ տեսութեանց առջեւ՝ տրխուր մտատանջութեանց մատնուած ըլլամ,— բայց հիմայ պիտի ըսեմ թէ Հայութեան հոգին պէտք է այդ տարտամութիւնները ի բաց փարատէ. ինչ որ ալ ըլլայ անցեալը, որուն վրայ խօսիլն իսկ աւելորդ է, այսօր Հայութեան հոգին իւր վրայ վստահելու չափ իրաւունք ունի։

Ա՛յո՛ ունի, վասն զի իւր ցարդ դիմանալը այնպիսի իմն անցեալ է, որ ապագայ վտանգին վախը կը փարատէ։ Ունի՝ վասն զի ինչչափ ալ վարատական և դադթական, ինչչափ ալ տկար և անզօր, բայց տակաւին վառ կը պահէ աննկուն հոգի մը։ Ունի՝ վասն զի արդեան վիճակը նախկինէն տարբեր է, այսօրը երեկէն աղէկ, որով վաղուն ալ այսօրէն ընտիր կը դուշակուի։ Ունի՝ վասն զի իւր իրաւանց արձագանքը բարձրագոյն տեղեր եւաւ, և միջնազգային ատեաններու վճռով արդարացաւ։ Ունի՝ վասն զի քաղաքական

հարկին բարձրագոյն օրէնքն իւր վիճակն ալ նկատեց, և ասնոր ալ իր պաշտպանութիւնը շնորհեց։ Ունի՝ վասն զի ամեն տեղ Հայն սթափեցաւ, և եթէ միտքն գժուարանայ, սիրտն կը շարժի գործել և յուսալ։ Ունի՝ վասն զի այսօր մեզմէ իւրաքանչիւրն ալ այդ ապահովութիւնը կ'զգայ. և ուր հասարակաց կարծիքը կը միանայ, անդ փիլիսոփայք աներկեւան ճշմարտութիւն կը հաստատեն։ Վերը վհատեալ հոգիները յիշեցի, ասոնք շատ էին, այսօր քիչցան, վասն զի առիթներն իսկ քիչցան. և մեք որ իմաստասիրելով այդ հետեւութեան հասանք՝ պարտաւոր եմք ընդհանրացնել այդ համոզումը, և բանիւ և գործով աշխատիլ որ Հայութեան հոգին ամենուրեք և ամեն սրտի մէջ զգենու նոր աշխոյժ, նոր երանդ և նոր գործունէութիւն։

Հայութեան հոգւոյն մէջ ուրիշ թերութիւն մըն ալ կը նկատեն ոմանք, այն է դիւրաւ իւր ազգութեան անունն, լեզուն, սովորութիւնն և տարազն թողլով, օտարազգեաց նմանիլ, և փառք սեպել իսկ՝ երբ մէկը այնչափ կարենայ իւր անձնաւորութիւնը ծպտել և կեղծել, որ Եւրոպացւոյ մը հետ չփոթուի։ Այդ յանցանքի, կամ թէ կ'ուզէք յանցանք ալ չըսեմ, այդ թեթեւ բնաւորութեան տէր անձինք մերազնէից մէջ եղած են, և կան իսկ. սակայն անիրաւ է ըսելն, եթէ այդպիսեաց ըրածը Հայութեան հոգւոյն իրր կանոն մը պէտք է առնուլ։ Ասոնք ո՛չ ազգին ընդհանրութիւնը կը կազմեն, և ո՛չ ալ ազգին մեծամասնութեան մէջ կը դըտնուին։ Այդ ընողներէն շատերն ալ դիւրաւ չքմեղանք կը դտնան, որովհետեւ իրենց ուսումնական կրթութիւնը ազգին կեդրոնին մէջ չկարենալով դտնալ, օտար աշխարհաց մէջ պարտաւորուեցան վնտռել, և օտար սովորութեանց ընտանեցան, իսկ ունակութեան զօրութիւնն ալ ոչ ոք կը բռնայ ուրանալ։ Վարդ ժողվելու դացին, փուշն ալ մէկտեղ բերին։ Իսկ անոնք որ հեռաւոր աշխարհներ դաղթելով՝ ժամանակով տեղացւոց հետ խառնուեցան և ոչնչացան, դրեթէ բնական հարկի մը զոհ եղած պէտք է ըսուին, և ոչ թէ հոգւոյ տկարութեամբ յանցաւոր։

Գալով առջիններուն, մեր փոյթը պիտի ըլլայ ճանչնալ և ծանուցանել թէ այս չէ յառաջադիմութեան նշանը և արդիւնքը, և ջանալ որ անտեղութիւն մը՝ որ բարեբաղդաբար քիչերու մէջ պարփակեալ է՝ չընդարձակի։ Եւ եթէ արմատաքի դարման մը ալ կը փնտռուի, այն ալ առաջին անգամ զուրցածներնուս հետ կը նոյնանայ. այն է փութալ ազգային դաստիարակութեամբ սնուցանել մեր պատանեակները, և անոնց երկրորդական և բարձրագոյն ուսումն ալ ազգայինի վերածելու աշխատիլ. ազգային մամուլը հարըստացընել. ազգային ընտիր և օգտակար լրագրաց ձեռօք հանապազօր ազգային ճաշակ տպաւորել երիտասարդութեան սրտին մէջ. մէկ խօսքով ինչ որ մնաց և սրտի յաղուրդ է ի մասին ուսմանց և գիտելեաց՝ ազգային պարունակին մէջ լրացուցանել, որ իրաւամբ կարեւորն իսկ օտար պարունակաց մէջ փնտռելու չպարտաւորուին։ Իրաւ որ առ այժմ ուսումնական արուեստից համար համալսարաններ յաճախողներ դժուարաւ պիտի կարենան Հայկական համալսարան մը գտնալ. բայց միթէ հնար չէ՞ որ ազգին մեծամասնութիւնը՝ գոնէ ուսումնական անձ մը ըլլալու կարեւոր եղածը՝ իւր ազգին ծոցին մէջ լիովին և կատարելապէս ունենայ։

Եթէ ճշմարիտը խօսիլ ուզեմք, ազգին մեծամասնութիւնը և գրեթէ ընդհանրութիւնը՝ լիովին յարեալ է այն ամէն բանի որ իւրն է, և այդ յարումն եղած է իւր փրկութեան ալ գլխաւոր պատճառը. և յայսմ մասին աշխատութիւն մը պէտք չէ ազգը համոզելու։ Թերեւս հակառակ այսր եղած բացառութեանց խօսքն իսկ ընել հարկ չէր, եթէ բովանդակ իմ նպատակիս հետ յարաբերութիւն ունեցող կետերը ամենայն ճշդութեամբ մէջ տեղ դնելու պարտքը չզգայի։

Ազգային կրթութիւն մը տալով, վհատութեան երկիւղը փարատելով, և օտարազգեաց նմանելու թերեւութենէն փախչելով Հայութեան հոգին արծարծել, ահա ընելիքնիս. ասոր արդիւնքն են մէկ կողմէն Հայութեան հոգւոյն բնութիւնը հաստատել, միւս կողմէն սոյն հոգւոյն վրայ դրուած

արատները սրբել. մէկ կողմէն եղած ամբաստանութեանց արդարացուցումը տալ, միւս կողմէն ընկալեալ պակասութեանց դարմանները հոգալ. նախաբանիս մէջ տուած խոստմանս համեմատ տեսական խօսակցութիւններէ պիտի խորշէի, ահա խոստմանս կատարումը, ահա գործնական միջոցաց մեկնութիւնը. բայց դեռ ուրիշ ծանրակշիռ կետ մը ալ կայ, այն ալ պէտք է մեկնել, թէպէտ աւարտելու ալ առենը կը հասնի։

Բանախօսութեանս առաջին մասին մէջ բաւական բացատրեցի Հայութեան հոգւոյն բնածին յատկութիւններէն մին, որ էր արտակեդրոնական դրութեան ունեցած յարումը և անհատական յատկութեան և զօրութեանց ազատ ասպարէզ պահանջելու միտումը։ Որք Հայութեան ապագային կ'աշխատին՝ հարկ է որ միտքերնուն առջեւ ունենան թէ պարտաւոր են Հայութեան հոգւոյն համեմատ աշխատիլ։ Շատ լաւ դրութիւններ, շատ ընտիր օրէնքներ, շատ օգտակար գործեր կը հաստատուին կամ կը կատարուին զանազան աշխարհաց և ազգաց մէջ. անտեղի է պնդելը թէ ի հարկէ անոնք մեր ազգին և մեր աշխարհին մէջ ալ, պէտք է նոյն կերպով գործադրել, և անկէց աներկբայ օգուտներ սպասել։ Շատ իմաստուն մէկ մը ըլլալ հարկ չէ իմանալու կամ իմացընելու համար, թէ ընտիր օրէնքը բացարձակ բան մը չէ, այլ յարաբերական, և ինչ որ ոմանց համար օգտակար է այլոց համար վնասակար կրնայ ըլլալ։ Սահմանադրական հոգւոյն վրայ իսկ խօսելով, որոյ օգտակարութիւնն այժմ ազգաց մեծագոյն մասէն ընկալեալ և գործադրեալ է, ոչ ապաքէն շատ մը իմաստուն քաղաքագէտք կ'ըսեն թէ այս կամ այն ազգին յարմար չէ, օգտակար չէ. ոչ ապաքէն սահմանադրութեան հաստատուելուն և արտակեդրոնական ոճոյն համար ժողովրդեան մէջ չափաւոր յառաջադիմութիւն և զարգացումն փնտռել սկզբունք եղած է։

Մեր ժողովրդեան յառաջադիմութեան ինչչափ ըլլալը չքննեմ, այլ յաւէտ ցուցնելէն ետքը թէ անոր համար արտակեդրոնական ոճն, բնական պիտոյք մի է, օրինաւոր կը սե-

պեմ հետեւցնելը թէ ուրեմն մեր ազգը յառաջադէմ և զարգացեալ ժողովուրդ մի է։ Սակայն երկուք են զարգացմունք. մին որ բնական տաղանդոյն արդիւնքն է, և այս մեր ազգին մէջ կայ. իսկ միւսն ուսումնական դաստիարակութեան արդիւնք է, և անոր մէջ շատ պակասութիւններ ունիմք տակաւին։ Ասոնցմէ առաջինն ալ բաւական է որ մեր ազգին զարգացեալ ժողովրդոց յարմար սեպուած վարչութեան և մատակարարութեան ոճը չնորհուի. և այն ամեն ազգայինք որք Հայութեան բարւոյն համար կ'աշխատին թող սոյն կանոնաց հպատակին. և եթէ կ'ուզեն որ իրենց ջանքն արդասաբեր ըլլայ, թող օտարոտի ճանբաներու չերթան, և եթէ կ'երթան, թող չզարմանան երբ իրենց ջանքն վայրապար և անօգուտ կը մնան։

Սակայն լաւ իմացուին խօսքերս, և չըլլայ թէ ոմանք այլ ընդ այլոյ իմաստ մը տան անոնց։ Որպէս զի ամեն սկզբունք և ամեն կանոն իւր նպատակին հասնի, պէտք է յարգէ ծայրայեղութենէ փախչելու օրէնքը, և ոչ ոք պնդէ մէկ ծայրը՝ մոռնալով միւս ծայրը. այլ գիտնայ թէ ինչ որ առաքինութիւն է՝ միջին տեղին մնալ կը պարտաւորի։ Ծայրայեղութիւն մի է եթէ ոք պնդէ և ըսէ. Որովհետեւ արտակեդրոնական ոճը աւելի յարմար դատուած է մեր ազգին վարչութեան և աւելի օգտակար անոր յառաջադիմութեան, անոր համար անհնար է բարեխառնել զայն արտաքոյ կարգի տրամադրութեամբ մը արտաքոյ կարգի գործոց մէջ, և խսպառ հերքելի են ոմանց և սակաւուց գործերը՝ ես և երբ անոնցմէ յայտնի օգուտներ կը տեսնուին։ Բայց ծայրայեղութիւն է ես թէ ուրիշ մը պնդէ և ըսէ. Որովհետեւ կան առիթներ որոց մէջ մէկի կամ սակաւուց գործը խորհրդապահութեան, դաղտնութեան, շտութեան և պատեհութեան պարագայիւքն անմիջական օգուտներ կ'արտադրէ առանց երկար վիճից և քննութեանց ժամավաճառութեան, պէտք է ուրեմն միշտ այդ կերպով գործել, և հակառակ ճանբան խափանել. ջանալ իսկ որ ազգային ժողովրդական հոգին իւր աղդեցութիւնը կորսնցնէ։

Ցո՛ւր ինձ խումբ մը մարդիկ որ առջի կարծիքը պաշպանէ, տո՛ւր ես խումբ մը որ երկրորդ կարծեաց ջատագովութիւնը ընէ, և ահա ընդունայն վէճեր և անմիաբանութեան աղբիւրներ։ Իրաւ է որ պիտի չըսեմ թէ այդ երկու խումբ մարդիկ անմիաբանութեան հոգի ունին. բայց ի՞նչ օգուտ անոնց հոգւոյն այս կերպ ըլլալէն կամ չըլլալէն, եթէ գլասը նոյն կերպով մէջ տեղ կ'ելլէ։ Ի՞նչ օգուտ, կը հարցնէի..., բայց միտքս կուգայ թէ օգուտ մը ունի. և այս է թէ քանի որ իրենց հոգին ըրածներնուն յարմար չէ, մեծ յոյս մի է որ իրաց վիճակը իմացած ատեննին՝ դիւրաւ պիտի թողուն իրենց պատահական սխալանքը և պիտի չպնդեն ընդունայն տարաձայնութեանց վրայ։ Մանաւանդ որ, Ունկնդիրք իմ, ամենէն մեծ իմաստութիւն ժամանակը ճանչնալն է, առիթները կշռել, պարագայները կշռադատել, և իւրաքանչիւր օրուան և իւրաքանչիւր վայրկենին մէջ ինչ որ պէտք է զայն գործել, և ոչ թէ ինչ որ տեսականապէս ընտիր է՝ անոր հետեւիլ։

Կարեւոր ժամանակի մը մէջ եմք. առիթներն և պարագայներն զրոս մեք ստեղծեցինք, կամ որք առանց մեր կամաց իսկ մէջ տեղ ելան, ծանրակշիռ են. և մեր ձեռքն է որ անոնք աւելի իսկ ծանրակշիռ ըլլան, քան թէ ինչ որ են։ Դուք որ ազգին բաղդը ձեռուընիդ ունիք, իշխանաւորք և պատուաւորք ազգիս, դուք որ ազգին կեդրոնը կը կազմէք, վարչութեան գլուխք և անդամք, դուք որ սրբազան երդմամբ և օրինական պարտաւորութեամբ ազգին բարութեան և յառաջադիմութեան պատասխանատուութիւնը ստանձնած էք, ձեզ ամենեցուն կը յանդգնիմ յիշեցուցանել. — թէպէտև խրատու ըլլալու իշխանութիւնը չունիմ, այլ կը խօսիմ այնու համարձակութեամբ զոր ճշմարտութիւնն իւր անքննելի զօրութեամբ կ'ազդէ ամեն խղճի և սրտի. — ձեզ ամենեցուն կը յանդգնիմ յիշեցուցանել, թէ կը սխալիք և մեծ յանցանք կը բարդէք ձեր գլուխը, եթէ կը մոռնայք ի նկատի առնուլ՝ թէ ինչ է ժողովրդեան միտքը և կամքը. եթէ ազգային գործը ենթադրելով իբր ձեր մի-

այն գործ՝ դուրսէն եկած լուսերուն և խրատներուն յարգ չէք ընծայեր. եթէ անցնիւր գործունէութեան առջեւ արգելքներ յարուցանելով, կարծես թէ ձեր միայն գործունէութիւնը կ'ուզէք փայլեցնել. եթէ ուր օրինական կամ խոհեմական կամ շահեկան ընթացից հարկը կը պահանջէ՝ որ հպատակին և ժողովրդեան ալ բաղձանքն յարգուի, դուք ձեր իրաւանց տարադէպ պաշտպանութեանը հետամուտ կ'ըլլաք։

Այլ և դուք ժողովուրդք և ժողովրդականք, դուք Հայեր ամեն դասէ և կարգէ, եթէ կը բաղձայք խստապահանջ ըլլալ ձեր իշխանութեանց հետ, աւելի խստապահանջ եղէք ձեզի հետ։ Եթէ պարտք մի կայ անոնց վրայ, կրկին պարտք մեր վրայ կը ծանրանայ. պէտք է ճանչնամք թէ ո՛չ միշտ իշխանութիւնն կրնայ իւր ընթացից և գործոց սկիզբը և միջոցը և նպատակը ակնյայտնի պարզաբանել, ո՛չ միշտ կրնայ իւր ջատագովութիւնն իսկ կատարելապէս խօսիլ, ո՛չ միշտ կրնայ իւր զգուշաւորութեանց կետերը ստորասաբար հաստատել. ստէպ հասարակաց վստահութիւնն է որ իրեն զէն և զօրավիգն կ'ըլլայ ի գործ, և պաշտպան գործէն ետքը։ Երբոր դժուարին են ժամանակք, օգտակար է իշխանութեան չորս կողմը ամփոփուելով, մի և միացեալ միութիւն մը կազմել, և անով ամեն կերպ դժուարութեանց դէմ մաքառիլ։ Բաւական վստահութեան հիմ մըն է, որ նա՝ որ ազգին բազդին վրայ կը յոգնի ժողովրդական քուէէն ընդունած է իւր պաշտօնն, և ժողովրդական քուէէն կը վայելէ վստահութեան յարատեւելը։ Զափազանց պահանջողութիւնն թէպէտ և չար հոգի մը չէ, բայց բարի հոգւոյ զեղծումն ալ վնասակար է, և մեք մեր նախնեաց թշուառութենէն ուսեալ խրատովիմք և զգաստանամք։ Անոնց հոգին պաշտպանեցի իրաւ, բայց միթէ հնար է սխալանքն ալ պաշտպանել։

Դուք Հայեր և Հայուհիներ, դուք որ ի ընէ անհատական ձրից և կատարելութեանց պարծանքը ունիք, և անհատական գործունէութեան համբաւով կը փառաւորուիք, ահա և ձեր իւրաքանչիւրին առջեւ ընդարձակ ասպարէզ մը։ Այդ գործը որ ամենուս հաւասարապէս սիրելի, և ամենուս ներքին ղգացմանց դիտակետն է, այդ գործը որ Հայութեան հոգւոյն վախճանն է, Հայութեան հոգւոյն ոճովն պիտի կատարուի։ Ինչարժ միտք չգտնուին, անզգայ սիրտք չտեսնուին, անգործ ձեռք չմնան. ամենայն ոք մտածէ, ամենայն ոք փութայ, ամենայն ոք գործէ. իւրաքանչիւրնիս իւր կարողութեան համեմատը կատարէ, և եթէ հնար է կարողութենէ աւելին ալ, վասն զի պէտքը միջոցներէն մեծագոյն է տակաւին։ Երկուքնիս երեքնիս միանալով կարողութիւններս շատցնեմք, այդ խմբեակներով ընկերութիւններ կազմեմք, այդ ընկերութիւններով հասարակութիւնք յառաջանան, այդ հասարակութեամբք ազգը միանայ և զօրանայ։ Մեր հոգւոյն համեմատ կը բաղձամք որ ամենքնիս ալ սեփական գործ մը ունենամք, և ամեն գործոյն համար ըսուի թէ՝ Այս ալ այս անուն անձին գործն է։ Ի՞նչ ընեմք։ Այդ ալ Հայութեան հոգւոյն մէկ յատկութիւնն է, եթէ կ'ուզէք ըսեմ ես՝ թէ մէկ տկարութիւնն է։ Բայց այդ տկարութեան ալ աղէկ կողմը կայ. և իւրաքանչիւր ոք թող աշխատի որ ինքն ալ աղէկ բան մը ըրած համարուի։ Երբ գործողք կը շատնան, արդիւնք ալ կը շատնան, օգուտներ ալ. միթէ ազգին վնասակա՞ր է այդ։

Բայց կրնայ վնասակար ըլլալ՝ եթէ այդ բաժանեալ գործք միութեան կետ մը չունենան, եթէ այդ շառաւիղք կեդրոնի հետ միացած չըլլան, և դարձեալ՝ երբ այդ մասնական գործք զիրար կործանելու աշխատին, կամ իրերայ գործունէութեան ասպարէզը խափանեն։ Եթէ երբէք այսպիսի ինչ ընէ ոք՝ նա չարաչար կը մեղանչէ Հայութեան հոգւոյն դէմ, և նորա անունը Հայութեան դպրութենէն իսկ ջնջուելու է. այլ երբ ընդհակառակն սուրբ նպատակով մը մին քան զմիւսն յառաջանալու կ'աշխատի, ինչո՞ւ վնասակար ըլլայ բաժանաբար գործելը։ Կան բաներ որ անբաժին են, և անոնց մէջ միակութիւն հաստատելու է, ինչպէս հնար չէ երկու կեդրոն հաստատել մէկ շրջանակին մէջ։ Այս առթէն դուրս թող զանազան մասունք մնան. թող զանազանութեան կե-

տեր իսկ մնան. մասանց իրարու խառնիլը և ձուլիլը չէ փնտռուածը, այլ մասանց իրարու կցիլը։ Մանաւանդ թէ Հայութեան հոգւոյն ազդեցութեան համեմատ այդ է միայն ապահով ուղին՝ որով մեք կրնամք յուսալ թէ մեր նպատակին պիտի հասնիմք։ Ասոր համար ես երբէք չեմ մոռցեր թէ ինչո՞ւ ընկերութիւնք մեր մէջ կը շատնան, և թէ ինչո՞ւ նորոգեալ և նորածնունդ ընկերութիւնք օր քան զօր կը յաճախեն. մոռցելու տեղ կ'ըլլար եթէ այդ ընկերութիւնք սկսէին իրարու գործը խափանել կամ իրարու գործունէութեան ասպարէզը դրաւել. բայց ցորչափ մէկը Վասպուրականին մէջը կ'աշխատի, միւսը ի Տուրուբերան, մէկը ի Կիլիկիա, միւսը ի փոքր Հայս, մէկը մէկալին նպաստից չվնասեր, և հանդանակութեանց արգելք չդներ, կ'ուրախանամ իսկ որ գործողք կը շատնան այդ ընդարձակ դաշտին մէջ, ուր բազմաթիւ մշակաց պէտքը ամեն օր աւելի զգալի կ'ըլլայ։ Ըստ այսմ ամեն Հայ սիրտ պէտք է խնդութեամբ ողջունէ այդ ազգասէր թաղին մէջ ծնունդ առած նորութիւն մը, Հայուհեաց Ազգանուէր Ընկերութիւնը, որ ազգասէր և ազգանուէր տիկնայց և օրիորդաց ձեռնտուութիւնը և գործունէութիւնը և նպաստը կը բերէ ազգային յառաջադիմութեան գործոյն, և այնպիսի ձեւով և զգածմամբ՝ որք Հայութեան գեղեցիկ հոգւոյն արտայայտութիւնն են։ Ձեր գեղեցիկ հոգւոյն առջեւ, ազգանուէր Տիկնայք և Օրիորդք, պէտք է որ ամեն ազգասէր իւր զարմացման հարկը վճարէ, և անկեղծութեամբ կ'ըսեմ՝ թէ առանց սրտաշարժ զգացմանց չկրցայ ընթեռնուլ յայնկոյս վոսփորի ձեր փափուկ և համեստախօս ըղձից բացատրութիւնները, որոց ձեր խմբէն մին ի ձեր անուն թարգման ըլլալ յանձնառու եղած էր։ Իսկ՝ թէ ձեր ազնիւ օրինակը ամեն թաղի և ամեն քաղաքի Հայուհեաց մէջ տարածուէր։

Իսկ ընկերութեանց գործոյն գալով, — որովհետեւ ամեն բանի մէջ չափ և կանոն կարեւոր է, — անոնց շատնալուն մէջ ալ օգտակար կ'ըլլայ հոգալ, որ բազմացնելու փափաքը մանր և աննշանակ էակաց ստեղծման չծառայէ. և միւս

կողմէն լեզեայն կամ յայտնի միաբանութիւն մը զանազան ընկերութեանց գործերը բարեկարգէ։ Ուրիշ աշխարհաց մէջ սովորութիւն է զանազան ընկերութեանց կեդրոնական համայնախումբ մը ունենալ, ամենուն գործը յարմար կերպով բաշխելու։ Հնար չէ՞ արդեօք նոյնը մեր մէջն ալ գործադրել։ Ազգային ընկերութեանց գործադիր ժողովոց մը տադրութիւնը կը հրաւիրեմ այս կետին վրայ, մանաւանդ որ կերպը բոլորովին յարմար է Հայութեան հոգւոյն։

Կրցայ՞ արդեօք, Ունկնդիրք իմ, Նպատակիս հասնիլ և Հայութեան հոգին ինչպէս որ պէտք է ձեր առջեւ ներկայացնել։ Գիտեմ թէ շատ բաներ ալ ես կրնայի զրուցել, մանաւանդ թէ զրուցածներս ալ մարթ էր աւելի պարզ և կարգադրեալ կերպով բացատրել. սակայն վերադասեցի որ խօսքերս զեղման սրտի արձագանք մը ըլլան, քան թէ արուեստակեալ ճարտարախօսութեան օրինակ մը։ Երբոր բովանդակ իսկ աշխարհ իբրեւ կաթսայ յեռանդեան կը պըզպզիկէ, երբոր ազգք և ազգինք իրենց ապագային խորհրդոցն կը տոչորին, երբոր ամեն կողմէն յուսոյ և ակնկալութեան ձայներ կը լսուին, երբոր մեր ազգն ալ այդ բարեգուշակ շարժման մասնակցելու կ'սկսի, ծանր էր ինձ տեսնել որ չարագուշակ մարգարէներ մոռցածին կարծիքներով և ենթադրութիւններով ազգասիրաց եռանդը կը մարեն և աշխատողաց ձեռուընները կը թուլցնեն։ Ամենէն ծանր էր Հայութեան հոգւոյն վրայ դրուած արատը, անմիաբանութեան տգեղ կնքով անոր ճակատը պղծելը, և այս պակասութենէն առաջ եկած ուրիշ հիմնական թերութիւնները ենթադրել, որով անհնար կ'ըլլար բոլորովին Հայ ազգութենէն բարի ապագայ մը սպասել. ծանր էր ինձ կ'ըսեմ լսել այս ամեն եղերական ձայները, ուստի անոնց հակառակ խօսիլ ուզեցի, որպէս զի ցուցնեմ թէ ո՞րն է բուն խնդիրը, ո՞րն է պատահական պակսութիւնը. ի՞նչ է անոնց պատճառը, և ի՞նչ դարձեալ գործածուելու դարմանը։ Ինչ որ ցարդ խօսեցայ բաւական ըլլայ. ուրիշներու կը թողում աւելի խոհական և աւելի կատարեալ գործը։

Երբոր Հայաստանի տարաբաղդ վիճակը կը քննեմ, երբոր իր վրայ տիրող ազդեցութեանց ներգործութիւնը կը չափեմ, երբոր եղկելի Հայոց գտնուած վիճակին շփոթութիւնները կը տեսնեմ, երբոր մեր Հայրենեաց կատարեալ կործանմանէ հրաշալի ազատութիւնը կը նկատեմ, և միանգամայն կը լսեմ որ ոմանք զարմացմամբ առջեւ կը դնեն Հայոց միաբանութեան և արիութեան մասին ըրած պակսութիւնները, և դսրովանաց և դատապարտութեան խօսքեր կ'աւելցնեն այն խեղճերուն դէմ, անկեղծաբար ըսեմ, ես կը զարմանամ յաւէտ թէ ինչպէս կրցեր են այնչափ միաբանութեան և արիութեան գործեր կատարել՝ որչափ ինչ պատմութիւնք և յիշատակք մեզ հասուցած են, և թէ ինչպէս կրցած են պահել իրենց ազգութեան արդեան վիճակը, այն վիճակը՝ որ ոմանց աչքին այդչափ յեսնեալ և ոչինչ կը տեսնուի։

Այդ ամենայն միութեան և հաստատութեան արդիւնք է, Սիրելիք իմ, այն միութեան որով համազգիք եղբարք են իրերաց, եղբարք ի Հայկ և յԱրամ, եղբարք ի Գրիգորեանս և ի Ներսիսեանս։ Այդ եղբայրութեան հոգին խորարմատ տպաւորեալ ունի Հայն իւր սրտին մէջ, և նոյն կը հնչէ իւր շրթանց վրայ՝ վասն զի յաւելուածոյ սրտի խօսի բերան։ Մինչ ուրիշ ազգերու մէջ՝ ընկեր առ ընկեր միրոյ անուն կ'ընծայէ, Հայաստանցին կը սիրէ իւր համազգին եղբայր անուանել։ Շատ աւելի անուշ և քնքուշ է ազգասիրաց ականջներուն Հայաստանի ռամկին ԱԽՊԱՐ ը, քան թէ թրքախօս կամ պարսկախօս կամ գաղղիախօս հնչմամբ՝ համազգի առ համազգի տիրական անուանակոչում տալը։ Մեր ըրածը չէ Հայութեան հոգւոյն հաւատարիմ թարգմանը, այլ անոնց սովորութիւնը՝ որք հայրենական հողոյն վրայ ծնած և սնած, և տառապանաց բեռամբ իսկ ճնշեալ, հայրենական նշխարաց հաւատարիմ պահապան՝ և հայրենական աւանդութեանց աւանդապահ են մնացած։ Այդ աւանդութիւնն է թարգման Հայութեան հոգւոյն յոր կը պարծիմք, և որով պէտք է որ վարուիմք ամենքնիս, ոչ թէ

շրթամբ այլ և գործով եղբայր անունը տալով իրերաց, վասն զի

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի ԵՂԲԱՅՐ անուն։

Խորհրդաւոր յիշատակ մը ի դէպ կու գայ, Եղբարք իմ, որ Հայութեան հոգւոյն և ազգային եղբայրակցութեան յիշատակը փառաւորեմք։ Ցեռանդն լրացաւ Ազգային Սահմանադրութեան ինն եւ տասներորդ տարեդարձը, և վաղ իւ կը պատրաստին ազգայինք տօնախմբել զայն ազգային շրջափակի մէջ. այն Սահմանադրութիւնը որ Հայութեան հոգւոյն հետեւութիւնն է, և որով Հայութեան հոգին իւր օրինաւոր բացատրութիւնը ստացաւ։ Ցօնեցէք զայն և տօնախմբեցէք, Եղբարք իմ, վասն զի այնու Հայութեան հոգին կը տօնախմբէք. այլ միայն յուշ լիցի ձեզ, թէ սահմանադրութիւն սահման կը դնէ, և ամենայն ինչ որ բարի է և օգտակար, դրուած սահմանաց մէջ պիտի շարժի։ Բարի է Հայութեան հոգին, այլ երբ վերոյիշատակեալ սահմանաց կանոններուն գործէ։

ԱՌԱՔԵԼՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱԽՀ-ՐՐ
Ա. Մ. Ա. ՄԱՇՏՈՑ
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

Գին 3 ղուրուշ արծաթի դրամ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0201570